

ՀՈՒՅՄ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

«Իմ Արցախ» խորագրով հեռուստամարաթոնի ժամանակ հավաքվել է 15 մլն 428 հազար դոլար



Այս համարում

Հայերեն բաժին

- 1- Խմբագրական.....0
- 2- Հայաստանի Հանրապետություն.....1
- 3- Արևմտյան Հայաստան.....8
- 4- Սփյուռք.....10
- 5- Միջազգային.....11
- 6- Հասարակական.....11
- 7- Մշակույթ.....19

Պարսկերեն բաժին

- Արցախի պատմություն.....0-3
- Գրականություն- Ռուբեն Հովսեփյան.....3-4

Ճապիկի առաջին էջում՝ «Իմ Արցախ» խորագրով հեռուստամարաթոն

Վերջին էջում՝ Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 217, Նոյեմբեր. 2016 No. 217, Nov. 2016

ماهنامه لویس - شماره ۲۱۷ آذر ماه ۱۳۹۵

Մշակութային և հասարակական ամսագիր

ԼՈՒՅՍ

Արտոնատեր և գլխավոր խմբագիր՝
Էդ. Բաղդասարյան
Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան
Թամ Ղարախանյան, Վաչիկ Վարդանյան
Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան,

Սաթենիկ Ավետիսյան, Անդրանիկ Խեչումյան
Փոստարկը 15875-9488 Թեիրան - Իրան
Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com
Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : **louys_monthly@yahoo.com**

Internet : **www.louysonline.com**

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

ماهنامه لویس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر: ادیک باغداساریان

نشانی نشریه : تهران صندوق پستی ۱۵۸۷۵-۹۴۸۸

پست الکترونیکی: **louys_monthly@yahoo.com**

نشانی اینترنت : **www.louysonline.com**

«Իմ Արցախ» խորագրով հեռուստամարաթոնի ժամանակ հավաքվել է 15 մլն 428 հազար դոլար



«Հայաստան» համահայկական հիմնադրամի «Իմ Արցախ» հեռուստամարաթոնի ժամանակ այս տարի հավաքվել է 15 մլն 428 հազար 777 ԱՄՆ դոլար:



Նշենք, որ հեռուստամարաթոնն ամենամյա է, այն կազմակերպվում է արդեն 19-րդ անգամ: Հավաքված ամբողջ գումարն այս տարի ուղղվելու է Արցախի տուժած բնակավայրերի վերականգնմանը, խաղաղ բնակչության անվտանգությանն ու պաշտպանությանն ուղղված միջոցառումներին, ինչպես նաև Արցախի բազմազավակ ընտանիքների համար առանձնատների կառուցմանը: Բացի դրանից կան նաև նպատակային հատկացումներով ծրագրեր Հայաստանի և Արցախի համար:

Հայաստանի Հանրապետություն

Վիզեն Սարգսյան. Չոհված սպաների ընտանիքները միանվագ 10 մլն դրամ եւ ամսական 300 հազար դրամ կստանան

Մարտական հերթապահության կամ մարտական պայմաններում զոհված սպաների ընտանիքները միանվագ 10 մլն դրամ եւ ամսական 300 հազար դրամ կստանան: «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների առողջությանը կամ կյանքի վնասի փոխհատուցման մասին» օրինագիծը հավանություն է ստացել նոյեմբերի 10-ին Կառավարության նիստում:

Պաշտպանության նախարար Վիզեն Սարգսյանի խոսքով՝ զոհվածների եւ 1-ին խմբի հաշմանդամություն ստացած զինծառայողների ընտանիքները միանվագ կստանան 10 մլն դրամ (2-րդ խմբի հաշմանդամները՝ 5 մլն), իսկ հետագայում՝ 20 տարվա ընթացքում՝ ամսական 300 հազար դրամ: Սպաների համար այդ գումարը կկազմի ամսական 300 հազար դրամ, ենթասպանների համար՝ 250 հազար դրամ, շարքայինների համար՝ 100 հազար դրամ (զոհվածներն ու 1-ին խմբի հաշմանդամները): Այս դեպքում սպային կամ նրա ընտանիքին 20 տարի շարունակ կհատկացվի 82 մլն դրամ, ենթասպաններին՝ 70 մլն, շարքայիններին՝ 58 մլն:

2-րդ խմբի հաշմանդամների համար նախատեսված է համապատասխանաբար 200, 150 եւ 100 հազար դրամ ամսական: Միջոցները կստանան զինծառայողների ծնողները եւ երեխաները, ինչպես նաեւ մինչեւ 23 տարեկան եղբայրները, քույրերը:

Նախարարի խոսքով՝ 2016-ի ապրիլի դեպքերը ցույց տվեցին, որ միայն քյուջեի միջոցներից փոխհատուցում վճարել անհնար է: Այդ պատճառով հավելյալ ֆինանսական միջոցներ կհատկացվեն հատուկ ֆոնդից, որտեղ կհավաքվեն պետության եւ հասարակության միջոցները:

Յուրաքանչյուր աշխատող քաղաքացի ֆոնդին ամսական հազար դրամ կվճարի: Ֆոնդը կառավարելու են Կառավարությունը, ԿԲ-ն եւ Հոգաբարձուների խորհուրդը: Կառավարման ծախսերը չպեք է գերազանցեն ակտիվների 0.5 տոկոսը, իսկ ակտիվների կառավարման ծախսերը՝ 2 տոկոսը:

ԿԲ ղեկավար Արթուր Չավադյանը հայտնել էր, որ առնվազն 5 տարի անվճար կկառավարի ֆոնդը:

Սերժ Սարգսյանը հանդիպել է Աբու Դաբի Էմիրության թագաժառանգի հետ. ԱՄԷ-ն կինտենսիվացնի ներդրումները (Ֆոտո)

«ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն այսօր՝ նոյեմբերի 9-ին, պաշտոնական այցով ժամանել է Արաբական Միացյալ Էմիրություններ: Դիմավորման պաշտոնական արարողությունից հետո տեղի է ունեցել ՀՀ Նախագահի եւ Աբու Դաբի Էմիրության թագաժառանգ, ԱՄԷ Չինված ուժերի գլխավոր հրամանատարի տեղակալ շեյխ Մուհամմադ բին Չայեդ ալ Նահյանի ընդլայնված կազմով հանդիպումը՝ երկու երկրների պաշտոնական պատվիրակությունների անդամների մասնակցությամբ, որին հաջորդել է Սերժ Սարգսյանի եւ շեյխ Մուհամմադ բին Չայեդ ալ Նահյանի առանձնագրույցը:

«ՀՀ նախագահի մամուլի գրասենյակից հայտնում են, որ նշելով, որ Հայաստանը շահագրգիռ է Արաբական Միացյալ Էմիրությունների հետ քաղաքական երկխոսության ակտիվացմամբ եւ համընդգրկուն փոխգործակցության զարգացմամբ, Հանրապետության նախագահը հույս է հայտնել, որ պաշտոնական այցի շրջանակներում կայանալիք բանակցություններն ու ձեռքբերվելիք պայմանավորվածություններն իրենց զգալի ներդրումը կունենան հայ-էմիրաթական հարաբերությունների հետագա զարգացման գործում:

Սերժ Սարգսյանը գոհունակությամբ է նշել, որ Հայաստանի եւ Արաբական Միացյալ Էմիրությունների միջեւ հարաբերությունները վերջին տասնամյակում թեւակոխել են

զարգացման նոր, ավելի գործնական փուլ. երկու երկրների միջեւ ստորագրվել են տարբեր բնագավառներում համագործակցության մասին երկու տասնյակից ավելի փաստաթղթեր, որոնք կհամալրվեն պաշտոնական այցի շրջանակներում ստորագրվելիք նոր փաստաթղթերով:

Չրուցակցները համակարծիք են եղել, որ դարերի պատմություն ունեցող հայ եւ արաբ ժողովուրդների բարեկամությամբ պայմանավորված ամուր հիմքի վրա այսօր Հայաստանի եւ արաբական երկրների, այդ թվում՝ Արաբական Միացյալ Էմիրությունների միջեւ հաջողությամբ զարգանում են միջպետական հարաբերությունները: Երկկողմ փոխգործակցության զարգացման համատեքստում կարելիք է երկու երկրների միջեւ պարբերական քաղաքական խորհրդակցությունների, ինչպես նաեւ տարբեր մակարդակի փոխայցելությունների իրականացումը:



«ՀՀ Նախագահը եւ թագաժառանգ շեյխ Մուհամմադ բին Չայեդ ալ Նահյանը հայ-էմիրաթական առեւտրատնտեսական փոխգործակցության ներկայիս տեմպերը խթանելու գործում կարելիք է միջկառավարական հանձնաժողովի աշխատանքը, որը, նրանց համոզմամբ, նպաստավոր հարթակ կհանդիսանա միմյանց շուկաների ուսումնասիրման, տարբեր ոլորտներում շահավետ ներդրումների իրականացման, ինչպես նաեւ երկու երկրների տնտեսության մեջ տեղի ունեցող բարեփոխումների ու նորարարությունների ընթացքին հետեւելու համար: Կողմերը պայմանավորվել են ինտենսիվացնել Հայաստանի տնտեսության մեջ Էմիրաթական ներդրումների ներգրավման ուղղությամբ տարվող աշխատանքները եւ գտնել արդյունավետ մեխանիզմներ ներդրումային ծրագրերի իրագործման նպատակով:

Հանդիպմանը երկկողմ օրակարգի փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերից բացի, անդրադարձ է եղել միջազգային արդի խնդիրներին, մերձավորարեւելյան ճգնաժամին, այդ տարածաշրջանում ծավալվող իրադարձություններին, Հարավային Կովկասի տարածաշրջանում առկա խնդիրներին ու մարտահրավերներին, ԼՂ հիմնախնդրի կարգավորման գործընթացին:

Սերժ Սարգսյանն այցելել է Աբու Դաբիի Սրբոց Նահատակաց հայկական եկեղեցի (Ֆոտո)

Նախագահ Սերժ Սարգսյանն այսօր Արաբական Միացյալ Էմիրություններ պաշտոնական այցի շրջանակներում այցելել է Աբու Դաբիի Սրբոց Նահատակաց հայկական եկեղեցի, եկեղեցուն կից գործող «Արա Խանոյան» կիրակնօրյա վարժարան, շեյխ Չայեդ Մեծ մզկիթ եւ ԱՄԷ-ում ՀՀ դեսպանություն:

Աբու Դաբիում հայկական եկեղեցու կառուցման համար 2006թ. հողատարածք է նվիրաբերել Աբու Դաբիի թագաժառանգ շեյխ Մուհամմադ բին Չայեդ ալ Նահյանը: Նորակառույց եկեղեցին օծվել է 2014թ. դեկտեմբերի 12-ին, նույն օրը հիմնադրվել է նաեւ

Աբու Դաբիի Ազգային առաջնորդարանը: 2016թ. մայիսից եկեղեցուն կից գործում է «Արա Խանդյան» կիրակնօրյա վարժարանը, որտեղ այժմ ուսանում է 36 աշակերտ: Եկեղեցու բակում տեղադրված է Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակին նվիրված խաչքար: Նախագահ Սերժ Սարգսյանը Մրբոց Նահատակաց եկեղեցի այցի ժամանակ ծաղիկներ է դրել խաչքարին եւ հարգանքի տուրք մատուցել Ցեղասպանության զոհերի հիշատակին: Եկեղեցում տեղի ունեցած գոհաբանական աղոթքից հետո Հանրապետության Նախագահը ելույթ է ունեցել, որում անդրադարձել է եկեղեցու նշանակությանը մեր ժողովրդի ինքնության պահպանման ու հարատևության գործում: Նախագահը նաև շնորհակալություն է հայտնել Արաբական Միացյալ Էմիրությունների իշխող ընտանիքին՝ ի դեմս Աբու Դաբիի թագաժառանգ շեյխ Մուհամմադ բին Չայեդ ալ Նահյանի, ով հնարավոր դարձրեց հայկական Մրբոց Նահատակաց եկեղեցու շինարարությունը: Սերժ Սարգսյանն ընդգծել է, որ Արաբական աշխարհի սրտում կանգնեցված այս եկեղեցին, միջկրոնական հանդուրժողականության եւ փոխադարձ հարգանքի ու համակրանքի խոսուն վկան է, որ բարեբեր հող է ստեղծում նաև տարբեր կրոնների ներկայացուցիչների խաղաղ համակեցության համար: Ազգային առաջնորդարանում Հանրապետության Նախագահը կարճատև հանդիպում է ունեցել համայնքային եւ եկեղեցական գործիչների հետ:



ԱՄԷ հիմնադիր Նախագահ շեյխ Չայեդի անվան Մեծ մզկիթ այցելության ժամանակ ՀՀ Նախագահը մզկիթում գտնվող դամբարանում հարգանքի տուրք է մատուցել շեյխ Չայեդ բին Մուլթան ալ Նահյանի հիշատակին եւ գրառում կատարել Պատվավոր հյուրերի գրքում, որից հետո տեղի է ունեցել նվերների փոխանակման արարողություն:

«Անգնահատելի է Արաբական Միացյալ Էմիրությունների հիմնադիր Նախագահ շեյխ Չայեդ բին Մուլթան ալ Նահյանի դերն այս հիասքանչ երկրի կայացման ու բարգավաճման գործում: Նրա կառավարման օրոք հիմք դրվեց հայ-եմիրաթական միջպետական բարձր մակարդակի համագործակցությանը, որի համար հայտնում եմ հայ ժողովրդի եւ անձամբ իմ երախտագիտությունը», -գրել է Նախագահ Սարգսյանը: ԱՄԷ պաշտոնական այցի առաջին օրվա ավարտին Հանրապետության Նախագահին Աբու Դաբիում հանդիպում է ունեցել տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Հայ իրավապաշտպանները Կարեն Պետրոսյանի գործով դիմել են ՄԻԵԳ

Ադրբեջանում 2014թ. օգոստոսին գերության մեջ մահացած Կարեն Պետրոսյանի գործով իրավապաշտպանների եւ փաստաբանների խումբը դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Այս տեղեկությունը հաստատեց գործով զբաղվող իրավապաշտպաններից Արտակ Չեյնայանը: «Վիճարկում ենք կյանքի իրավունքի խախտման իրավաչափությունը», - ասաց Արտակ Չեյնայանը: Թե վերջապես ինչ հանգամանքներում է մահացել Կարեն Պետրոսյանը եւ ինչպես են նրա հետ վարվել Ադրբեջանում,

Չեյնայանը խոստացավ առաջիկայում համապատասխան հայտարարությամբ հանդես գալ:



Նշենք, որ Կարեն Պետրոսյանի մահվան հանգամանքները պարզելու համար Հայաստանի Ազգային անվտանգության ծառայությունում քննություն էր ընթանում: ԱԱԾ-ն այդպես էլ առ այսօր որեւէ հայտարարությամբ հանդես չի եկել տեղի ունեցածի վերաբերյալ: Ավելի վաղ հայտնել էինք, որ Հայաստանի Տավուշի մարզի Չինարի գյուղի բնակիչ Կարեն Պետրոսյանը գերեվարվել էր 2014թ. օգոստոսի 7-ին: Հաջորդ օրն արդեն՝ օգոստոսին 8-ին, ադրբեջանական կողմը տեղեկություն էր տարածել իբր «սրտի անբավարարության հետեւանքով» գերու մահվան մասին: Հոկտեմբերի 10-ին Ադրբեջանի իշխանությունները Կարեն Պետրոսյանի դին հանձնել են Հայաստանին:

Իտալիայի արտգործնախարարը հարգել է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը



Իտալիայի արտգործնախարար Պաոլո Չենտիլիոնի ղեկավարած պատվիրակությունը նոյեմբերի 8-ին այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր: Պաշտոնական այցով Հայաստանում գտնվող ԱԳ նախարարին ուղեկցում էին փոխարտգործնախարար Կարեն Նազարյանը, Ցեղասպանության ինստիտուտ-թանգարանի տնօրեն Հայկ Դեմոյանը եւ ՀՀ-ում Իտալիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ջովաննի Ռիչյուլին: Չենտիլիոնին ծաղիկներ է դրել հուշարձանի եւ հավերժական կրակի մոտ՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի:

Հայաստանում ամուսնության դեպքերը նվազել են 7,9 տոկոսով



Հայաստանում 2016թ. հունվար- սեպտեմբերին նվազել են գրանցված ամուսնության դեպքերը: Ազգային վիճակագրական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն, այս տարվա առաջին 9 ամիսներին 2015թ. նույն ժամանակահատվածի համեմատ 7.9%-ով նվազել են գրանցված ամուսնության դեպքերը եւ կազմել 12 հազար 88:

Ամուսնալուծության դեպքերը 2015թ. հունվար-սեպտեմբերի համեմատ նվազել են 4.2%-ով եւ կազմել 2 հազար 682:

Մարտական հրաձգությամբ գնդային մարտավարական գորավարժություն Արցախում



Նոյեմբերի 4-ից 8-ը ՊԲ կենտրոնական ենթակայության գորամասերի եւ մի շարք ստորաբաժանումների ներգրավմամբ «Չորամասերի դուրս բերումը մարտական կիրառման շրջաններ հակառակորդի հանկարծակի հարձակման պայմաններում. վերախմբավորման իրականացում. պաշտպանական մարտի վարում. մխրճված հակառակորդի ջախջախում եւ առաջնագծի վերականգնում. դիրքերի բարելավման նպատակով հարձակողական մարտի վարում եւ նպաստավոր դիրքերի գրադեցում» թեմայով անց է կացվել գնդային մարտավարական գորավարժություն:

Նոյեմբերի 8-ին բանակի «Տիգրանակերտ» գորավարժարանում տեղի է ունեցել գորավարժության եզրափակիչ՝ մարտական հրաձգության փուլը, որի ընթացքին հետեւել են ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, պաշտպանության նախարար, գեներալ-լեյտենանտ Լեւոն Մնացականյանը, հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության ներկայացուցիչներ: Չորավարժությունը, որը նպատակ ուներ կատարելագործելու կենտրոնական ենթակայության գորամասերի հրամանատարների ունակությունները պաշտպանական մարտում ենթակա եւ տրված ստորաբաժանումների ղեկավարման գործում, առաջադրված խնդիրների կատարման ընթացքում մարզել ներգրավված գորամասերի շտաբները, բարձրացնել պաշտպանական մարտի ժամանակ հրամանատարների որոշումներ ընդունելու, խնդիրներ առաջադրելու, ստորաբաժանումների ղեկավարման ու կրակի կառավարման գործնական ունակությունները, մարտական իրադրությանն առավել մոտ պայմաններում մարտական խնդիրների կատարման ընթացքում հասնել գումարտակների, վաշտերի, դասակների եւ ջոկերի ներդաշնակ գործողությունների, ինչպես նաեւ անձնակազմի մոտ զարգացնել դիմացկունություն եւ մարտական խնդիրների կատարման համար բարոյամարտական ու կամային բարձր որակներ, անցել է ըստ նախատեսված պլանի, իսկ մասնակից անձնակազմը ցուցաբերել է կրակային խոցման բարձր արդյունավետություն:

Չորախաղերի ընթացքում, տեղական հավատարմագրված մի շարք զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար, պաշտպանության բանակում առաջին անգամ խաղարկվել է մարտական իրադրությանն

առավել մոտ պայմաններում լրագրողական գործունեություն իրականացնելու կարգը: Չորավարժության ավարտին աչքի ընկած մի շարք զինծառայողներ հանրապետության նախագահի եւ պաշտպանության նախարարի կողմից պարգևատրվել են պատվոգրերով ու արժեքավոր նվերներով:

2017-ին բյուջեից 35.3 մլն դրամ կհատկացնեն դեպի Իրան գոյություն չունեցող երկաթուղու տնօրինությանը



2017 թվականին ՀՀ կառավարությունը 35.3 մլն դրամ կհատկացնի «Երկաթուղու շինարարության տնօրինությանը»: 2016-ին այդ նպատակով հատկացվել էր 39.2 մլն դրամ:

Տնօրինությունը զբաղվում է Հայաստան-Իրան երկաթուղու համար ներդրողների որոնման աշխատանքներով:

Իրան-Հայաստան երկաթուղու շինարարությունը կարող է կազմել 3.2 մլրդ դոլար, իսկ շինարարության ժամկետը՝ 6 տարի: Երկաթուղու շինարարությունը դեռ չի սկսվել, իսկ ներդրողներ գրավելու անհրաժեշտության մասին խոսում են արդեն մոտ 10 տարի:

Հայաստանում ստորգետնյա ջերմության ուսումնասիրությունը շարունակվում է. երկրորդ հորն են փորելու

Հայաստանի հարավում Քարքարի երկրաջերմային տեղանքում որոշվել է երկրորդ խորը հետազոտական հորը փորել: Այս մասին հայտնեց Հայաստանի էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների փոխնախարար Արեգ Գալստյանը: Նրա խոսքով՝ առաջին հորի խորությունը հասցվել է գրեթե 1500 մետրի: Այս խորության վրա +100-ից քիչ բարձր ջերմաստիճան է գրանցվել:

Երկրորդը հորը որոշվել է ավելի խորը փոխել, որպեսզի հնարավոր լինի ավելի հստակ գնահատել եւ ստորգետնյա պահուստարանի ջերմության ծավալը, եւ տարբեր կետերում դրա ճնշումը:


Աշխատանքների ժամկետը կախված կլինի կլիմայական պայմաններից. հորատման տարածքը շուրջ 2950 մետր բարձրության վրա է:

Հիշեցնենք, որ Հայաստանի երկրաջերմային պաշարների հետազոտության երկրորդ փուլն իրականացվում է 2015 թվականից, Համաշխարհային բանկից ստացված 8.55 մլն դոլարի դրամաշնորհով: Առաջին փուլը՝ դարձյալ ՀԲ-ի տրամադրած դրամաշնորհով նախնական ուսումնասիրությունը, ավարտվել է 2012 թվականին:

Նախագծի համաձայն՝ մինչև 2018 թվականի մայիսը պետք է տեխնիկա-տնտեսական հիմնավորում կազմվի, որպեսզի Կառավարությունը կարողանա որոշել, արդյո՞ք բավականաչափ ջերմություն կա՝ այնտեղ երկրաջերմային էլեկտրակայան կառուցելու համար:

Նախագծին վերաբերող Համաշխարհային բանկի փաստաթղթերի համաձայն՝ մինչև +110 աստիճանը բավարար չէ էլեկտրականություն ստանալու համար: 110-250 աստիճանի պարագայում կայան կարելի է կառուցել միայն բինար՝ կրկնակի տեխնոլոգիայի միջոցով (ջրային գոլորշուց մեկ այլ հեղուկի ջերմության փոխանցմամբ): Միայն եթե հետազոտությունը +250-ից բարձր ջերմաստիճան բացահայտի, հնարավոր կլինի ակնթարթային շոգեկազմավորման (flash steam) կայանի շինարարություն ձեռնարկել: ՀԲ-ի մասնագետների գնահատմամբ՝ նման էլեկտրաէներգիային ինքնարժեքը շուկայական կլինի (կհամեմատվի փոքր ՀԷԿ-երի եւ գազով աշխատող ՋԷԿ-երի գին հետ):

Հայաստանը պատրաստ է Իրանի համար ձեռավորել համապատասխան հարթակ դեպի ԵՏՍ շուկա. ՀՀ վարչապետ



Հայաստանը պատրաստ է Իրանի համար ձեռավորել համապատասխան հարթակ դեպի ԵՏՍ շուկա: Այս մասին այսօր՝ նոյեմբերի 18-ին, Իրանի Իսլամական Հանրապետության Էկոնոմիկայի եւ ֆինանսների փոխնախարար, գլխավոր մաքսատան պետ Մասուդ Քարբասիանիի հետ հանդիպման ժամանակ նշել է ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը: «Իրանի Իսլամական Հանրապետությունը Հայաստանի Հանրապետության ոչ միայն բարեկամ երկիր է, այլ նաեւ կարելու գործընկերներից է, եւ մեր միջև քաղաքական երկխոսությունը գտնվում է բարձր մակարդակի վրա: Բայց մեր տնտեսական հարաբերություններն ավելի ընդլայնելու եւ զարգացնելու ներուժ ունենք: Երկու երկրների մաքսային կառույցների ներդաշնակ աշխատանքը եւս կնպաստի առեւտրատնտեսական կապերի զարգացմանը», - ողջունելով հյուրերին՝ նշել է Կարեն Կարապետյանը:

«ՀԺ». Մովսես Հակոբյանի չարաշահումների մասին հայտարարությունները զինդատախազն ուղարկել է ՔԿ

«Հայկական ժամանակ» թերթը գրում է. «Պաշտպանության նախարարության կողմից ցորենի գնման գործընթացի վերաբերյալ Վահան Բաղասյանի հայտարարությունների մասին մամուլում տեղ գտած հրապարակումները ՀՀ զինվորական դատախազի կողմից սույն թվականի նոյեմբերի 16-ին ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտեի

զինվորական քննչական գլխավոր վարչություն՝ նյութեր նախապատրաստելու համար:

Մեր հարցմանն ի պատասխան երեկ այդ մասին տեղեկացրեցին ՀՀ գլխավոր դատախազության հանրային կապերի բաժնից:



Հիշեցնենք, որ ԼԴՀ ԱԺ նախկին պատգամավոր Վահան Բաղասյանը ֆեյսբուքյան իր էջում հոկտեմբերին այսպիսի գրառում էր արել. «ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետը, լինելով նախկինում ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ, չարաշահելով իր պաշտոնական դիրքը, խախտելով գնումների մասին օրենքը, շուկայականից զգալի բարձր գներով իր ձեռնարկության և ՊՆ-ի միջև կնքել է ցորենի գնման պայմանագիր, ինչի արդյունքում բանակից յուրացվել է մի քանի տասնյակ միլիոն դրամ»:

Այնուհետեւ մեզ հետ զրույցում հայտարարել էր, որ դա միակը չէ Մովսես Հակոբյանի եւ նրա շրջապատի չարաշահումներից, ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի բազմաթիվ գնումներում կան բազմաթիվ չարաշահումներ:

«Ղարաբաղում ո՞վ չգիտի, որ Մովսես Հակոբյանն իրականացնում է հացաթխման գործողություն եւ ապահովում մի քանի գորամասեր: Դա նորմալ երեւոյթ էր համարում: Ինքը գեներալ է, թե՛ հացթուխ: Ինքը գեներալ չի, չի տիրապետում բանակին, չի տիրապետում մարտական գործողությունների կազմակերպմանը, դրանց դեմն առնելու հարցերին: Ես դա ասում եմ որպես պրոֆեսիոնալ զինվորական: Դա ցույց տվեց ապրիլի 2-ը: Բայց ինքը շատ լավ տիրապետում է փողերի մսխմանը: Օրինակ դուք տեղա՛յ եք, որ ինքը բանակի փողերով բնակարան է կառուցել, բանակին այդ բնակարանը վաճառել է 1 միլիոն 200 հազար դոլարով, եւ բանակը իրեն նվեր է տվել այդ տունը: Միայն այդ փաստը բավարար է, որ դատախազությունը քրեական գործ հարուցի եւ անհապաղ ազատությունից զրկի Սերժ Սարգսյանին, Սեյրան Օհանյանին եւ Մովսես Հակոբյանին, էլ մյուս հանցակիցներին չեմ ասում», - ասել էր Բաղասյանը:

Հայաստանի հանքերի մասին տվյալները թվայնացվում են. դա կնպաստի ներդրումային գրավչությանը

Հանքարդյունաբերության ոլորտի տեղեկատվության հասանելիության եւ մատչելիության ապահովման նպատակով մեկնարկվել է «Հանրապետական երկրաբանական ֆոնդում» առկա տվյալների թվայնացման աշխատանքները: Նախատեսվում է դրանք ավարտել հաջորդ տարվա ընթացքում:

«Հենրգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարության ընդերքի վարչության օգտակար հանածոների եւ ընդհանուր երկրաբանության բաժնի պետ Շուշանիկ Զերոբյանի փոխանցմամբ, թվայնացման աշխատանքների իրականացման նպատակով ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ ձեռք են բերվել անհրաժեշտ սարքավորումները եւ տեղադրվել «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում: Չնայած աշխատանքները սկսվել են տարվա երկրորդ կեսից, այնուհանդերձ արդեն իսկ իրականացվել է առկա ֆոնդային նյութերի ավելի քան 51 տոկոսի թվայնացումը: Դրանք տեղադրված են այդ նպատակով ստեղծված www.geo-fund.am ինտերնետային կայքում եւ հասանելի են բոլորին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԿՎՅԱԾ ԵՎ ՏԵԼԵՎԻԶՅՈՒԹՅԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԻ ՀԵՏ ԿԱԳԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

DEPARTMENT OF PUBLIC RELATIONS AND MASS MEDIA OF THE PRESIDENT OF THE REPUBLIC OF ARMENIA

Հեռ.՝ 522.364, 525.392, Փաքս՝ 522.364

Էլ. փոստ՝ press@president.am, URL: <http://www.president.am>

2016-11-26 / Նախագահը ցավակցական հեռագիր է հղել Ֆիդել Կաստրո Ռուսի մահվան կապակցությամբ

Նախագահ Սերժ Սարգսյանն այսօր ցավակցական հեռագիր է հղել Կուբայի պետական խորհրդի նախագահ, Նախարարների խորհրդի նախագահ Ռուսոլ Կաստրո Ռուսին՝ եղբոր՝ Ֆիդել Կաստրո Ռուսի մահվան կապակցությամբ, ցավակցություն ու գորակցություն հայտնել նրան և Կուբայի բարեկամ ժողովրդին:

«Ֆիդել Կաստրոյի դերն ու նշանակությունը Կուբայի նորագույն պատմության մեջ, իրոք, դժվար է գերազանահատել: Սա ծանր կորուստ է Կուբայի ժողովրդի համար, որն անկեղծ հարգանք ու սեր է տածում նրա հանդեպ: Իր գաղափարներին և սկզբունքներին մինչև վերջ հավատարիմ մնալով և պահպանելով իրեն բնորոշ խիզախ ու վեհ կեցվածքը՝ Ֆիդել Կաստրոն շարունակելու է ոգեշնչել և առաջնորդել կուբացիների նորանոր սերունդներին», -ասված է ՀՀ Նախագահի ցավակցական հեռագրում:

Նախագահը ցավակցական հեռագիր է հղել Իվան Միկոյանի մահվան կապակցությամբ

Նախագահ Սերժ Սարգսյանն այսօր ցավակցական հեռագիր է հղել Միկոյանների ընտանիքին՝ ակնառու ավիակոնստրուկտոր Իվան Միկոյանի մահվան կապակցությամբ: «Նա օժտված էր զարմանալի աշխատունակությամբ ու արարելու մեծ էներգիայով և մինչև կյանքի վերջին օրերն իր ամբողջ ուժերը ներդրեց ի շահ ավիացիայի զարգացման: Նրա հեռանալը անփոխարինելի կորուստ է բոլորիս համար: Անկեղծորեն կիսում եմ վիշտը, խորին ցավակցության և գորակցության խոսքեր եմ հղում ջազմական ավիացիայի զարգացման գործում ծանրակշիռ ներդրում ունեցած

առաջատար ավիակոնստրուկտորի ընտանիքին, ընկերներին և մտերիմներին: Իվան Անաստասի Միկոյանի լուսավոր հիշատակը ընդմիշտ կպահպանվի մեր սրտերում», -ասված է ՀՀ Նախագահի ցավակցական հեռագրում:

Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը ՀՀ Կ նախագահի ընտրությունից հետո

Շնորհակալ եմ: Շնորհակալ եմ Հայաստանի Հանրապետության խոշորագույն քաղաքական կառույցի, Հայաստանի հանրապետական կուսակցության Նախագահի պաշտոնում ինձ վերընտրելու կապակցությամբ: Բավական պատասխանատու ժամանակահատված ենք մտնում և անելիքներ շատ ունենք: Բայց ունենք նաև կուռ թիմ և տարիների հարուստ փորձ: Հիմա ես այդ փորձի հիման վրա հնչեցնեմ յոթ սկզբունք, որոնցով առաջնորդվել, որպես կուսակցության ղեկավար, շարունակելու եմ ակնկալել բոլոր կուսակցականներից՝ անկախ նրանց գրաված դիրքից հասարակության մեջ: Իսկ մեր երիտասարդ գործընկերները, կուսակցականների նոր սերունդն այս թեգերը թող ընկալի որպես յոթ խորհուրդ, որոնց պետք է հետևել մշտապես: Եվ այսպես.

- Առաջին խորհուրդը վերահաստատված պետականության մեր օրերից այս է. ձեր առաջին հոգսը թող լինի մեր երկրի անվտանգությունը:

Մեր ժողովրդի ազատությունը, իր երկրում ազատ ու անկախ ապրելու հայաստանցու կամքը մեր ամենամեծ արժեքներն են: Ցանկացած ոտնձգությունից դրանք պաշտպանելը մեր ամենամեծ պարտքն ու հոգսն է: Դրանց պաշտպանությունը արժանի է ամենամեծ գոհողության: Մեր հավաքական ինքնիշխանությունն ու ազատությունն արժանի են նույնքան անսահման լինելու, որքան անսահման են եղել դրանք վերահաստատելու ճանապարհին մեր ժողովրդի գոհաբերություններն ու տառապանքը:

- Երկրորդ խորհուրդը: Ձեր ջանքերն ուղղեք մեր ազատ ու ինքնիշխան երկրում օրինականության և արդարության ամրապնդմանը:

Հիշե՛ք, որ ուրիշներին դեպի օրենք և օրինականություն առաջնորդելուց առաջ, անձնական պատասխանատվություն ունեք ինքներդ լինելու օրենքի հյու ծառան ու օրինականության մարմնավորումը: Պետականակերտության մեր վերջին երկուսուկես տասնամյակները փաստում են՝ թերի օրենքները դրանք հետևողական կիրարկողների ձեռքում ավելի մեծ օգուտ կարող են բերել, քան լավագույն օրենքները՝ վատ ձեռքերում:

Ի վերջո, ի՛նչ արժե սեփական օրենքներ ընդունելու ինքնիշխանությունը, եթե ընդունածը օրենքների չպետք է հետևեն: Ի՛նչ արժե ազատությունը, եթե դրա սահմանները չես հարգում: Աններելի է, երբ իրավունքի սահմաններն ու օրինականությունը խախտում են դրանք սահմանողները: Անօրինական ճանապարհով օրինականություն հաստատել չի՛ լինի: Մեր ժողովրդի ազատությունն ու իրավունքներն արժանի են նույնքան պաշտպանված լինելու, որքան անպաշտպան են եղել դրանք դարեր շարունակ: Արժանի են նույնքան հարգանքի և հետևողականության, որքան դրանք ձեռք բերելու ճանապարհին մեր նախնիների ու ժամանակակիցների թափած այրյունը:

- Երրորդ խորհուրդը՝ խաղաղությունը սահմանին անխախտ է, երբ խաղաղ է սահմանից ներս:

Եվ եթե սահմանի խաղաղության պահպանը մեր զինվորն է, ապա սահմանից ներս խաղաղությունը ձեր պատասխանատվությունն է: Մի՛ օտարացրեք ոչ մեկին և անդառնալիորեն մի՛ խռովեք որևէ իոզի: Թշնամի մի՛ փնտրեք ներսում, մի՛ թշնամացրեք ու մի՛ թշնամացրեք: Անհանդուրժողականության կամ կուլակաթափության կոչերով ոչ մի տեղ չե՛ք հասնի: Ամենացավոտ որոշումն անգամ չի թշնամացնում, եթե հնչել են բոլոր փաստարկներն ու յուրաքանչյուրը խոսելու ու լսվելու հնարավորություն է ունեցել: Միշտ ու ամենուր եղե՛ք ժողովրդի կարիքներին հասու: Եղե՛ք ժողովրդի ցանկություններին ու

մտահոգություններին հաղորդ: Լսե՛ք բոլորին և խոսե՛ք յուրաքանչյուրի հետ: Օրենքը ուժի և հետևողականության միասնությունն է: Եվ եթե ուժի անսպաս աղբյուրը ժողովուրդն է, ապա երկրորդը մեծապես կախված է առաջնորդներից և գործիչներից:

Երկրի սահմանին խաղաղության վերջին գրավականը գեներ է ու գինվորը: Երկրի սահմանից ներս ոչ մի գեներով խաղաղություն չես հաստատի: Երկրի սահմանից ներս խաղաղություն հաստատելու միակ միջոցը վստահությունն է: Վստահությունը իրար հանդեպ: Վաստակե՛ք ժողովրդի վստահությունը ձեր հետևողականությամբ: Մեր նորանկախ պետականության կտավը հյուսված է վստահության թելերով: Ամրացրե՛ք այդ թելերն ու բազմապատկեք դրանք: Հենվե՛ք ձեր միակ անխախտ ու անդավաճան դաշնակցի՝ ժողովրդի վրա՝ ժողովրդի ուժի: Ձեր հանդեպ վստահությանը կարճե՛ք անվստահության կղզակները: Մեր ժողովուրդի արժանի է նույնքան անխռով ու խաղաղ ստեղծագործելու, որքան անվստահ ու ձայնագուրկ է եղել մասնատված ու խռովված օրերում: Արժանի է յույսի ու խաղաղության: Արժանի է նույնքան, որքան հաճախ խռովված է եղել հայը հայից դարեր ու հազարամյակներ շարունակ: - Գործող խորհուրդը: Միայն մարտահրավերներին հետևող հայացքը բաց է թողնում հնարավորությունը հնարավորության հետևից: Ձեր ջանքն ուղղեք մեր ստեղծագործ ժողովրդի համար նոր հնարավորություններ փնտրելուն: Փնտրե՛ք դրանք ամենուր: Ձեր հայացքն ուղղե՛ք դեպի աշխարհի անձայրածիր տափաստաններն ու օվկիանոսները, դեպի հսկայածավալ շուկաներն ու նոր տեխնոլոգիաները:

Ինտեգրման գործընթացները ոչ թե հանգրվան են, այլ ուղի՝ դեպի նոր հնարավորություններ, նոր շուկաներ, նոր գործընկերներ, նոր գիտելիք ու նոր հմտություն: Մեր ժողովրդի արաջագործ ոգին ու պայտուսն միտքն արժանի են արարման նույնքան մեծ հնարավորությունների, որքան մեծ են եղել դրան խոչընդոտող արգելքներն ու սահմանափակումներն անցյալում:

- Ձեր հինգերորդ ջանքը թող լինի հայաստանցու բարեկեցության, աշխատանքի ու ապահովության, ձեռներեցության ու նորարարության առաջընթացի ապահովումը: Փոքրաթիվ, բայց եռանդուն մեր ժողովրդի համար առաջընթացը կարևոր խորհուրդ ունի: Մենք պիտի կարողանանք փոխվել՝ պահպանվելով և շարունակ փոխակերպվելով: Մենք պիտի կարողանանք խուսափել քաղաքական, տնտեսական ու սոցիալական ցնցումներից և սակայն շարժվել առաջ: Կարողանանք բարեփոխել մեր քաղաքական, տնտեսական, սոցիալական համակարգերը, սակայն այդ փոփոխությունները պիտի լինեն հնարավորինս առանց ցավի ու մեծ կորուստների:

Հենց նման առաջընթացի է արժանի մեր համբերատար ժողովուրդը: Փորձե՛ք տիրապետել առաջընթացի արվեստին, փորձե՛ք ապահովել ժողովրդի ու ձեռնարկությունների կյանքի բնականոն ընթացքը, օրինականությունը անհրաժեշտ բարեփոխումների պահին: Եվ փորձե՛ք երաշխավորել օրինականությունը՝ բարեփոխումներ իրականացնելու շնորհիվ: Շտապե՛ք դանդաղ, քանի որ յուրաքանչյուր իրական առաջընթաց, առաջընթացի յուրաքանչյուր փուլ ունի իր ընթացքի հրամայականը: Իր զարկերակը: Աճի իր արագությունը: Մեր ժողովրդի առաջընթացն արժանի է նույնքան անխզելի ու անշքելի ձեռքբերումների, որքան անդառնալի են եղել մեր կորուստները և ցավոտ՝ մեր ցնցումները:

- Ձեր վեցերորդ ջանքն ուղղեք մեր փառապանծ ժողովրդի անցյալն ու ապագան կամրջելուն: Մա փոքրաթիվ ժողովրդի հարատևության մեկ այլ խորհուրդն է:

Այո՛, մենք քիչ ենք, սակայն մեր ժողովրդի պատմությունը հասնում է քաղաքակրթության ակունքներին, արմատներին, և եթե մեր կողքին կանգնեն հազարամյա մեր պատմության կերտողները, մեր նախնիները, նրանց ստեղծածն ու նրանց թողած անսահման ժառանգությունը, ապա մեզնից ավելի մեծաթիվ, ավելի հզոր և ավելի հարուստ ժողովուրդ երկրագնդի վրա քիչ կլինի: Նախնյաց մշակութային ժառանգությունը ճանապարհին թողած մեծաթիվ ժողովուրդն անհիշատակ կկորչի: Մինչդեռ իր

արժեքներին խնամքով ու հոգատար վերաբերվող ժողովրդի ապագայի ճանապարհներն իր նախնիներն են և իր անցյալը: Ամեն անգամ նորը կերտելիս հիշեք, որ արարելու հնարավորություն ստացել եք հենց այն ամենի շնորհիվ, ինչը համարում եք հին կամ հնացած: Ներկայի ձեր քարը դրեք անցյալի քարի վրա: Միայն այս կերպ կկարողանաք ապագային շնք ու շինություն փոխանցել: Մշակույթ: Պատմություն: Երկիր:

Անհոգաբար դեն նետած ձեր ժառանգությունն ուրիշին է հասնելու: Օտարն է հավակնելու ձեր նախնիների ժառանգորդի պատվին ու անվանը:

Խնամքով ու հոգատարությամբ վերաբերվեք մեր ժողովրդի տարբեր հատվածների հարուստ ու բազմազան ժառանգությանը: Եվ ուրեմն, տե՛ր մնացեք թե՛ հինին, թե՛ նորին:

Տե՛ր եղեք ձեռքբերումներին ու նաև՝ կորուստներին: Տե՛ր եղեք յավին ու վատին: Տե՛ր եղեք ճիշտ որոշումներին ու նաև՝ սխալներին: Ձեր ու ձեր նախորդների: Ձեր սերունդը, մեր սերունդը միայն մեր հավաքական տարածական ու ժամանակային ժառանգության շնորհիվ կարող է այս աշխարհում լինել ուժեղ ու մրցունակ: Աշխարհում, որտեղ թույլերն ու անմրցունակները դատապարտված են մնալու պատմության յուսանցքներում: Քաղաքակրթության արշալույսը դիմավորած մեր ժողովուրդն արժանի է մարդկության մտաբան բոլոր աստեղային ժամերի խոսուն ականատեսը լինելու, նույնքան, որքան դատապարտված է եղել լինելու մարդկության հանդեպ ծանրագույն հանցագործությունների գոհն ու լուռ վկան:

- Եվ վերջապես՝ ձեր յոթերորդ ջանքն ուղղեք վերափնաստավորելու ձեզ բաժին հասած ժամանակն ու դրա առաջադրած խնդիրները: Սահմանադրությունը, օրենքները երաշխավորում են երջանիկ ու ապահով լինելու իրավունքը, սակայն բոլորի երջանկության ու ապահովության համար յուրաքանչյուրն անելիք ունի: Մի՛ ձգտեք իշխանության, եթե պատրաստ չեք անմնացորդ ծառայելու: Իշխանությունը վայելք չէ, այլ ծանր բեռ:

Փորձե՛ք լուծել ձեր առջև կանգնած խնդիրներն ու վստահե՛ք ապագայի խնդիրները սերունդներին: Ձեզ բաժին ընկած դժվարությունները հաղթահարեք այնպես, որ ձեր հաջորդները չկրկնեն կրկնակի բեռի ծանրության տակ: Ձեր բաժին անելիքում եղե՛ք պատվախնդիր: Ձեր գործը ձեր ամենամեծ ժառանգությունն է:

Եղե՛ք իրատես, ձեր անելիքը կառուցե՛ք ամենաանպաստ զարգացումների հեռանկարն աչքի առաջ պահելով: Սակայն միշտ մնացեք լավատես: Ամենաժանր փորձությունների պահին լավատեսությունը, հանգուցալուծման հույսը, սեփական ուժերի հանդեպ հավատը, հայրենակցի հանդեպ սերը երբեմն դառնալու են ձեր միակ գինակիցը:

Եղե՛ք լավատես Հայաստանի ու մեր ժողովրդի ապագայի հանդեպ: Մեր ժողովուրդն ու մեր պետությունն արժանի՝ են լավագույնին: Մեր յուրաքանչյուր հայրենակից արժանի՝ է Հայաստանում լինելու լավագույնը:

Աշխարհում լինելու առաջինը: Միրելի՛ հանրապետականներ, եղե՛ք դեպի լավագույնը, դեպի առաջին տեղը հայաստանցուն բարձրացնող սանդուղքի մեկ աստիճանը: Թո՛ղ որ փոքր, սակայն հուսալի մեկ աստիճանը: Ընդհակառակ էմ: Եվ մեկ անգամ ևս բոլորիդ հավաստիացնում եմ, որ աշխատելու եմ նույն եռանդով, ինչ եռանդով աշխատում էինք միասին նախնիներում: Ընդհակալություն:

Իտալացի լրագրող. Դադիվանք այցելելը նշանակում է բացահայտել Կովկասի սիրտը

Դադիվանք այցելելը նշանակում է բացահայտել Կովկասի սիրտը, գրել է լրագրող Միմոնե Զոպելարոն իտալական Treccani պարբերականում՝ Լեռնային Դարաբաղ կատարած իր հերթական այցելության տպավորություններով:

Հողածում ասվում է. «Ճանապարհին, որով վանք ես գնում Ստեփանակերտից, մի լքված տանկ կա: Այստեղ նույնիսկ պատերազմն ասես մի ակնթարթ լռում է:




Դադիվանքը սաշենցում է կուսական բնության կատարյալ լուսնային մեջ իր ընկղմվածությամբ: Եկեղեցու պատմությունը սկիզբ է առնում քրիստոնեության առաջին դարերից: Եկեղեցին Լեռնային Ղարաբաղում է: Պատերազմն այստեղ մնում է «սառած»՝ ասես մի անեծքով, որը արդեն քառորդ դարից երկար է տևում: Դեպի Դադիվանք ճանապարհը ղժվարանցանելի է ու երկարատև: Երկու ժամում, որ ես այստեղ անցկացրեցի, ես միայն տասնյակ այցելուների նկատեցի: Եվ նրանց մեջ ես ճանաչեցի մի հայ եպիսկոպոսի՝ Սպահանից, որտեղ ես մի տարի ապրել եմ ու դասավանդել համալսարանում: Ասես երեկ լինեք, որ նա մոտեցավ ինձ ու խիստ ձայնով դիտորդություն արեց, որ ես եկեղեցում ոտքս ոտքիս գցած եմ նստել: Պատկառելի, խստապահանջ, հնչել բարիտոնով. . .

Դադիվանքն այսպես է կոչվել Դադիի անունով, որը Թադեոս առաքյալի աշակերտն է եղել ու քրիստոնեության արշալույսին հավատ է բերել այստեղ ու այստեղ էլ նահատակվել: Հենց նրա աճյունների վրա է կառուցվել եկեղեցին: Իր ներկա տեսքը այն ձեռք է բերել 13-րդ դարում՝ միավորելով հայկական միջնադարյան ճարտարապետության լավագույն ավանդությունները՝ խոշոր շինություններ, զուսպ ուրվագծեր, որոնցում սակայն խաղում են լույսն ու սովերը, նրբագեղ խաչքարներ, մեծ, արտահայտիչ որմնանկարներ: Եվ իհարկե ճարտարապետության ու շրջակա բնապատկերի ներդաշնակություն:

Դադիվանք այցելելը նշանակում է բացահայտել Կովկասի սիրտը: Մշակութային ու կրոնական դարավոր ավանդությունների կենտրոնակետ: Նաև անվերջանալի տառապանքների ու պատերազմների կենտրոնակետ: Խաղաղություն այստեղ առայսօր չկա»:

Մահացել է ակադեմիկոս Յուրի Չիլինգարյանը



78 տարեկանում 2016թ-ի նոյեմբերի 28-ին կյանքից հեռացավ հայտնի գիտնական, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ֆիզիկոս, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սերգեյի Չիլինգարյանը: Այս մասին տեղեկացրին ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոնից:

Քաղաքացիական հոգեհանգիստը տեղի կունենա սույն թվականի նոյեմբերի 30-ին՝ ժամը 18:00-ին, Կիևյան 1, բնակարան 10 հասցեում, հուղարկավորությունը՝ դեկտեմբերի 1-ին, ժամը 14:00-ին, նույն հասցեից:

Մեծ է Յուրի Չիլինգարյանի ներդրումը լազերային ֆիզիկայի եւ ոչ գծային օպտիկայի նոր ուղղությունների ասպարեզում: Իր գիտական գործունեությունը նա սկսել է ավելի քան 50 տարի առաջ՝ Երեւանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում, երբ ողջ աշխարհում դեռ նոր էին սկսվում լազերային թեմատիկայի ուղղությամբ տարվող ուսումնասիրությունները, եւ Յուրի Չիլինգարյանը հենց սկզբից ներգրավվել է այդ աշխատանքներում: 1962թ-ին ԵՊՀ-ում Չիլինգարյանը անմիջականորեն մասնակցել է Հայաստանի առաջին լազերի հավաքմանն ու թողարկմանը: Գիտական ասպարեզում նրա կայացումը տեղի է ունեցել Մոսկվայի պետական համալսարանում՝ ակադեմիկոս գիտնականներ, ոչ գծային օպտիկայի դասականներ պրոֆեսոր Ս.Ա.Ախմանովի եւ ակադեմիկոս Ռ.Վ.Խոխլովի ղեկավարությամբ:

1972 թ. Յուրի Չիլինգարյանը ընտրվել է ԵՊՀ օպտիկայի ամբիոնի վարիչ: 1984 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը: 1996 թ. ընտրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս: Յուրի Չիլինգարյանի աշակերտների թվում են 6 դոկտոր եւ 12 գիտության թեկնածուներ: Կիրառական բնույթի իր աշխատանքներով Յուրի Չիլինգարյանն ունի 9 հեղինակային վկայական օպտոէլեկտրոնիկայի եւ մանրաթելային օպտիկայի բնագավառում: Նա ավելի քան 250 հրատարակումների հեղինակ է:

Յուրի Չիլինգարյանը մասնակցել է մի շարք միջազգային գիտական համաժողովների կազմակերպմանը՝ Առաջին համամիութենական գիտական խորհրդակցություն՝ «Լազերային ճառագայթման փոխազդեցությունը հեղուկ բյուրեղների հետ», Ոչ գծային օպտիկայի գծով համամիութենական նստաշրջան, Կոհերենտ եւ ոչ գծային օպտիկայի գծով միջազգային գիտաժողով, Հայ ֆիզիկոսների առաջին համաշխարհային համաժողով: Չիլինգարյանը ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի մի շարք գիտական պրոբլեմային խորհուրդների անդամ էր: Օպտիկայի ամբիոնի վարիչի պաշտոնը Չիլինգարյանը վարել է մինչեւ 2007թ., միեւնույն ժամանակ, 1985-2000թթ. եղել է ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի ղեկան:

2006թ-ին Չիլինգարյանը ընտրվել է ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի եւ աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ: 2009թ. նա արժանացել է Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործիչ կոչմանը: ՀՀ ԳԱԱ նախագահությունն իր խորին ցավակցությունն է հայտնում ակադեմիկոս Յուրի Չիլինգարյանի մահվան կապակցությամբ: Նրա հիշատակը վառ կմնա նրա գործընկերների, հարազատների եւ Հայաստանի ողջ գիտական հանրության սրտերում:

Հայ կոմունիստները կո՞ղմ են ռուսերենին պետական լեզվի կարգավիճակ տալուն

Ռուսաց լեզվին երկրորդ պետական լեզվի կարգավիճակ տալու հարցը պետք է որոշի հայ ժողովուրդը հանրաքվեի միջոցով: Այս մասին նոյեմբերի 29-ին՝ մամուլի ասուլիսի ժամանակ, ասել է ՀՀ Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Տաճատ Սարգսյանը: Նրա խոսքով շատ ցանկալի է, որ յուրաքանչյուր հայ տիրապետի ռուսերենին: «Դա չի նշանակում, որ պետք չէ տիրապետել մյուս լեզուներին: Իսկ ռուսաց լեզվին երկրորդ

պետական լեզվի կարգավիճակ տալու հարցը պետք է որոշի հայ ժողովուրդը հանրաքվեի միջոցով»,- ասաց Տանատ Սարգսյանը:

Արևմտյան Հայաստան

Թուրքիայում հայ ոսկերիչների ստեղծած ապարանջանը ամենապահանջված զարդն է



Թուրքիայի Թոքատի նահանգում 300 տարի առաջ հայ ոսկերիչների ստեղծած ապարանջանը, որը հետագայում հենց Թոքատի ապարանջանն անունով է սկսել տարածվել ամբողջ արևելքում, շարունակում է Թուրքիայում ամենապահանջված ու հարգի ոսկե զարդը մնալ:

Թուրքական Sozcu պարբերականի փոխանցմամբ՝ Թուրքիայի Թոքատ նահանգի ոսկերիչների միության նախագահ Յաշար Գենջայը նշել է, որ դեռևս 300 տարի առաջ Թոքատում հայ ոսկերիչները ստեղծեցին ապարանջանի տեսակ, որը արագ մեծ համբավ ձեռք բերեց ու հենց Թոքատի ապարանջանն անունը ստացավ:

Յաշար Գենջայը շեշտել է, թե ամբողջ Թուրքիայում Թոքատի ապարանջանը ամենապահանջված ու հարգի զարդերից է, սակայն ԱՄՆ նախագահի ընտրության պատճառով թուրքական լիբայի արժեզրկման պատճառով ժողովրդի մոտ ֆինանսական խնդիրներ են առաջացել: Նա հույս է հայտնել, որ առաջիկա օրերում ամեն ինչ իր տեղը կընկնի եւ Թոքատի ապարանջանը կվաճառվի ինչպես նախկինում:

Վանա լճի հատակից խաչքարեր են դուրս բերել



Վանա լճի եւ նրա հարակից տարածքների մաքրման աշխատանքներ իրականացնող թուրքական FİVA ընկերությունը լճի հատակից խաչքարար ու թնդանոթի քարե կլոր արկեր է հայտնաբերել:

Ինչպես հաղորդում է «Միլիթեթ»-ը, դա տեղի է ունեցել լաստանավային տնօրինության կողմից Բիթլիսի նահանգի Թաթվան բնակավայրում լաստանավերի վերանորոգման ընթացքում:

Պարբերականը նշում է, որ Վանա լճի հատակը մաքրող ընկերությունը մինչ այժմ մեկ խաչքար, մեկ անցքով քար, երկու հատ քարե կլոր արկեր է դուրս բերել:

Ընկերության ներկայացուցիչ Այհան Դըշարըն ասել է, որ օրական միջինը հազար խմ ցելսոտ իրեր են դուրս բերում լճից. «Այս մասին տեղեկացրել ենք Վանի թանգարանի պաշտոնյաներին, դեռևս որեւէ մեկը չի եկել: Կարծում են լճի հատակում նմանատիպ էլի քարեր կան»:

Մենք համշենցիների հետ շփումների պատճառով ենք հայերեն բառեր գործածում. Արդվինի բռնաներ



Թուրքիայի բռնաների լեզվի բառերի 80 տոկոսը Համշենի հայերենից է վերցված: Թուրքիայի բռնաների՝ սեփական ինքնության ընկալումը բացահայտելու նպատակով Akunq.net-ից Մելինե Անումյանը Արդվին նահանգի Խոփա քաղաքում հանդիպել է տեղի քաղաքապետարանում աշխատող Ջեմիլ Էրեմջիի (52 տարեկան), Գյուլթեքին Քարաթաշի (47 տարեկան) եւ Էմրահ Քարաթաշի (32 տարեկան) հետ:

Նրանք բոլորն էլ ծագումով Արդվին նահանգի Շավշաթ գավառից են (Ջեմիլ Էրեմջին Ջեհգլի գյուղից է, իսկ Գյուլթեքին եւ Էմրահ Քարաթաշները՝ Քիրելլի գյուղից), եղել են Lom-Der միության անդամ, իսկ Ջեմիլ Էրեմջին՝ սույն կազմակերպության փոխնախագահը:

Մեզ հետ գրույցում անդրադառնալով Lom-Der միության նպատակին եւ գործունեությանը՝ կազմակերպության փոխնախագահ Ջեմիլ Էրեմջին նշեց, որ իրենք նախապես հույս ունեին, թե բազմաթիվ բռնաներ կանդամագրվեն միությանը, եւ որ կկարողանան նաեւ դրսից նյութական օժանդակություն ապահովել, սակայն այդպես չեղավ: Ըստ նրա՝ Lom-Der-ի հիմնական նպատակներից մեկն էլ մշակույթի պահպանումն էր:

Գյուլթեքին Քարաթաշը շեշտելով, թե իր կարծիքով՝ բռնաները ծագում են Ախալցխայի թուրքերից, իրենց կողմից բազմաթիվ հայերեն բառերի գործածումը «բացատրեց» տեղի համշենցիների հետ իրենց սերտ շփումների հանգամանքով: «Մեր լեզվի բառերի 80 տոկոսը համշենցիներից է վերցված»,-ասաց Գյուլթեքին Քարաթաշը:

Անդրադառնալով նաեւ կրոնի հարցին՝ նա ընդգծեց, թե իրենք հարկադրաբար են մահմեդականություն ընդունել: Նրանցից համեմատաբար երիտասարդ Էմրահ Գյուլթեքինն էլ հայտնեց, որ բռնա երիտասարդներն արդեն սկսել են մոռանալ իրենց մայրենի լեզուն, իսկ ընդհանրապես այն որպես գաղտնալեզու է կիրառվում լոմերի շրջանում: Էմրահ Գյուլթեքինը նշեց, թե ինքը դեռևս չի կողմնորոշվել իրենց ծագման հարցում. Ախալցխայի թո՛ւրք են, հա՛յ, թե՛ գնչու: Միայն գիտակցում է, որ իրենց լեզուն նման է համշենցիներին:

Ինֆորմանտները վերջում հայտնեցին, որ բռնաների մեծ մասը Խոփա գավառում հարում է ձախակողմյան հոսանքներին:

Թուրքիայում Մոնթե Մելքոնյանի ու Չորավար Անդրանիկի անուններով հուշաքարը մեծ արձագանք է գտել



Թուրքիայում ազգայնականները Թունջելիի (Դերսիմ) Նազըմիյեի շրջանի Խարիկ գյուղում 2015-ի ապրիլին Արմենակ Բաքըրջյանի հիշատակին նվիրված հուշաքարի հետ կապված աղավաղված տեղեկություններ են ներկայացրել, որը մեծ արձագանք է գտել:

Թուրքական ազգայնական ուղղվածության Sozcu պարբերականը օրեր առաջ հրապարակում էր տպագրել, թե Դերսիմում ԱՄԱԼԱ-ի առաջնորդների հիշատակին հուշարձան է տեղադրվել: Այս հրապարակումը մեծ արձագանք է գտել, որից հետո ազգայնական շրջանակները արշավ են սկսել եւ նահանգապետից պահանջել հեռացնել հուշարձանը: Նահանգապետն էլ իր հերթին հայտարարել է, թե հուշարձանը քանդելու որոշում է կայացվել:

Պետք է շեշտել, որ հիշյալ հուշաքարը նվիրված է քրդական TIKKO ձախակողմյան կազմակերպության առաջնորդներից Արմենակ Բաքըրջյանի հիշատակին: Հուշաքարի վրա գրված է նաև Հրանտ Դինքի, Գեւորգ Չաուշի, Մոնթե Մելքոնյանի, Անդրանիկ Օզանյանի անունները:

Նշենք, որ Արմենակ Բաքըրջյանը ծնվել է Դիարբեքիրում: Նա աջակցել է Արևմտյան Հայաստանի տարածքում մնացած հայերին Ստամբուլ տեղափոխելու գործին: Գործունեության ընթացքում ծանոթացել է Հրանտ Դինքի հետ: Միացել է քրդական TIKKO կառույցին եւ դարձել կառույցի հրամանատարներից մեկը: Սպանվել է Խարբերդում թուրք զինվորականների կողմից իրականացված գործողության ժամանակ:

Սամանտա Փաուերը հիշեցրել է Հայոց ցեղասպանության մասին


ՄԱԿ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցիչ Սամանտա Փաուերը հիշեցրել է, որ դեռևս գոյություն ունի այնպիսի երեւույթ, ինչպիսին Հայոց ցեղասպանության ժխտումն է, հայտնում է ԱՄՆ հայ դատի հանձնախումբը: Վաշինգթոնում Նորեյան մրցանակակիր Էլի Վիզելի

հիշատակին նվիրված միջոցառման ժամանակ անդրադարձ է կատարվել ցեղասպանությունների թեմային:



«Հայոց ցեղասպանության ժխտումը, նրա կյանքի օրոք տեղի ունեցած սարսափները՝ Փոլ Փոթը, Բոսնիան, Ռուսնդան, Դարֆուրը, Սիրիան: Նա ապրեց, որ տեսնի, որ ավելի ու ավելի շատ մարդիկ են անլսելի վայրագությունների վկաները դառնում, նա նաև տեսել է, որ դեռևս շատ անտարբերություն է մնում աշխարհում», – ասել է Փաուերը:

Հայկական հետքեր Արդվին նահանգի Արդանուջ գավառի Ադաքալե թաղամասում



Թուրքիայում հայ բռնաների ներկայիս դրության վերաբերյալ ուսումնասիրություն կատարելու նպատակով Akunq.net-ից Մելինե Անումյանն այցելել է Արդվին նահանգի՝ լոմերով հոծ բնակեցված Արդանուջ (հայկական անվանումը՝ Արտանույշ) գավառ, որտեղ հանդիպել է ազգությամբ բոշա Յաշար Բարաթաշին: Յաշարը ոչ միայն սիրով տեղեկություններ է հաղորդել սույն գավառում բնակվող իր ազգակիցների մասին, այլ նաև՝ ցույց տվել տեղի Ադաքալե՝ Գեւեհերնիք թաղամասում մնացած հայկական հետքերը:

Ճորոխի աջակողմյան վտակ Արտանուշ գետի ձախ ափին, Արդվին քաղաքից 21—22 կմ հարավ-արևելք, լեռան գառիվայրում գտնվող Արդանուջը նախկինում հիմնականում բնակեցված է եղել միայն հայերով, որոնց մեծ մասն սպանվել է՝ Արդանուջի՝ մինչ այժմ Մեսլի (Չայներ արձակող) քայա կոչվող ժայռից նետվելով դեպի Ջեհեննեմ դերեսի՝ Դժոխքի ձոր:


Նախքան թաղամաս հասնելը կանգ առանք նաև Դժոխքի ձորի մոտ եւ մի քանի լուսանկարներ արեցինք, սակայն չկարողացանք երկար մնալ այնտեղ, քանի որ մեզ թվում էր, թե դեռ լսվում են այդ սահմնկեցուցիչ կոտորածին գոհ գնացած հայերի ձայները...

Աղաքալեում գտնվել են 4 հայկական եկեղեցիներից, որոնցից միայն ավերակներ են պահպանվել: Ահա այդ եկեղեցիներից մեկը, որից ցավոք մոտ ապագայում, ըստ երևույթին, այլևս հետք չի մնա...

Յաշար Քարաթաշը մեզ ցույց տվեց նաև տեղի հայկական գերեզմանոցը: Տապանաքարերը թեև պահպանվել էին, բայց այլևս հնարավոր չէր ընթերցել դրանց վրայի հայերեն գրությունները:

Երբ անցանք մի տան մոտով, մեր ուղեկիցը հայտնեց, որ այն հայկական տուն է եղել, որի հետագա տերն այնտեղ մեծ գանձ է գտել՝ մնացած հայերց:

Նախկինում Արղանուշը գտնվում էր Մեծ Հայքի Գուգարք նահանգի Կղարքք գավառի սահմաններում եւ վերջինիս կենտրոնը համարվում: Արտանուշը նաև Հայ առաքելական եկեղեցու հոգևոր թեմի կենտրոնն էր: 1907 թ. այն ուներ 1214 բնակիչ, մեծ մասը՝ հայեր, իսկ ներկայում այստեղ հայերից միայն հատուկենտ հետքեր են մնացել:



Մփյուռք

Պետք է հայերին շտապ տարհանել Սիրիայից. ՄԴՀԿ-ի եւ ՌԱԿ-ի համատեղ հայտարարությունը



Պետք է իրականացնել մեր այն հայրենակիցների շտապ տարհանումը, ովքեր չեն ցանկանում մնալ Սիրիայում, սակայն նաև հնարավորություն չունեն դուրս գալ այնտեղից: Այս մասին նշված է Հայ ազգային Սոցիալ Դեմոկրատ Հնչակյան եւ Ռամկավար Ազատական կուսակցությունների համատեղ հայտարարության մեջ, որտեղ նրանք անդրադառնում են Սիրիայում եւ հատկապես Հալեպում տեղի ունեցող ողբերգական իրադարձություններին:

Հայտարարությունում, մասնավորապես, ասվում է. «Հայ ազգային Սոցիալ Դեմոկրատ Հնչակյան եւ Ռամկավար Ազատական կուսակցությունները խոր անհանգստությամբ են հետևում Սիրիայում եւ հատկապես Հալեպում տեղի ունեցող ողբերգական իրադարձություններին, որոնք անմիջապես հարվածում են տեղի հայ գաղութի ֆիզիկական անվտանգությանը, ոչնչացնում տասնյակ տարիների աշխատանքի արդյունքում ստեղծված հայ կրթական, մարզական, բարեսիրական հաստատությունները: Երկու կուսակցությունները մեծապես կարեւորում են Սիրիայում հայ համայնքի շարունակականության խնդիրը՝ իբրև Միջին Արևելքում աշխարհաքաղաքական գործոն, սակայն միեւնույն ժամանակ չեն կարող հանգիստ հետևել, թե ահաբեկիչների գործողությունների հետևանքով ինչպես են զոհվում կամ վիրավորվում մեր հայրենակիցները:

Ելնելով վերոնշյալից, ՌԱԿ-ն ու ՄԴՀԿ-ն հայտարարում են.

1. Հալեպի շուրջ ստեղծված աննախադեպ իրավիճակը պահանջում է ոչ միայն քաղաքական կուսակցությունների, այլև ողջ հայության համախմբում, ինչն էլ պետք է հանգեցնի հստակ քայլերի՝ սիրիահայության փրկության հարցում:
2. Պետք է իրականացնել մեր այն հայրենակիցների շտապ տարհանումը, ովքեր չեն ցանկանում մնալ Սիրիայում, սակայն նաև հնարավորություն չունեն դուրս գալ այնտեղից:
3. Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետք է մշակի եւ իրականացնի գործնական քայլեր՝ Հայաստան ներգաղթել ցանկացող սիրիահայերի ապրուստի եւ աշխատանքի ապահովման հարցում, որպեսզի վերջիններս չմտածեն այլ երկրներ արտագաղթելու մասին:
4. Անհրաժեշտ է մշակել պետական քաղաքականություն եւ ներգաղթի հայեցակարգ՝ ունենալով հստակ դիրքորոշում՝

ներգաղթել ցանկացող հայրենակիցներին Հայաստան տեղափոխելու, նրանց կեցության համար անհրաժեշտ բնակարանային եւ այլ կարիքները հոգալու, ինչպես նաեւ՝ հետագայում հասարակությանը ինտեգրելու հարցում»:

Ստամբուլում հայ նկարիչը 45 հազար դոլարով կտավ է վաճառել



Ստամբուլում ընթացող Contemporary Istanbul ցուցահանդեսին թուրք հայտնի շուամներ Ջեմ Յըլմազը 45 հազար դոլարով կտավ է գնել: Թուրքական Sozcu պարբերականի փոխանցմամբ՝ Ջեմ Յըլմազը հիացել է ժամանակակից հայ նկարիչ Տարոն Մուրադյանի աշխատանքներով եւ 45 հազար դոլարով գնել է «Ձկան վարորդ» կտավը:

Միջազգային

Ամերիկահայերը շնորհավորել են Դոնալդ Թրամփին



ԱՄՆ Կոնգրեսի թեկնածուների ավելի քան 93 տոկոսը, որոնց պաշտպանում էր ԱՄՆ Հայ դատի հանձնախումբը, ընտրվել է նոյեմբերի 8-ի քվեարկության ժամանակ: «Մենք ուզում ենք շնորհավորել Դոնալդ Թրամփին հաղթանակի առթիվ, արժանին հատուցել նախկին պետքարտուղար Քլինթոնին համառ պայքարի համար եւ շնորհակալություն հայտնել ամերիկահայ ընտրողներին: Հայ ընտրողների ռեկորդային քանակ էր եկել ընտրատեղամասեր, որպեսզի պաշտպանի դաշնային, պետական եւ տեղի թեկնածուներին, որոնք մեր համայնքի համար առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում»,- ասել է Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը: Նրա խոսքով՝ Հայ դատն անհամբերությամբ սպասում է Թրամփի վարչակազմի եւ Կոնգրեսի հետ աշխատանքին,

որպեսզի հայկական համայնքի համար բոլոր գերակա ուղղություններում առաջընթաց գրանցվի:

Հայ դատի հանձնախմբի աջակցությունը վայելող 11 թեկնածուներից 7-ը հաղթել են Սենատում: Կոնգրեսում հանձնախումբը պաշտպանում էր 122 թեկնածուի, որոնցից միայն 5-ն են անցել Ներկայացուցիչների պալատ: Դեմոկրատներ Աննա Էշուն եւ Ջեքի Սփեյերը, որոնք հայկական արմատներ ունեն, ստացել են ընտրողների լայն աջակցությունը: Եվս մեկ ամերիկահայ Դենն Թարքանյանը չի կարողացել հաղթանակ տանել:

Հայամետ կոնգրեսականները հաղթանակ են տանում Կոնգրեսում



Ավանդաբար հայերին աջակցող կոնգրեսականներ Ադամ Շիֆն ու Բրեդ Շերմանը հաղթանակ են տարել ընտրություններում եւ կպահպանեն ԱՄՆ Կոնգրեսում իրենց աթոռները: Շիֆն ու Շերմանը վստահ հաղթանակ են տարել՝ հավաքելով ավելի քան 70 տոկոս ձայն: ԱՄՆ Կոնգրեսում Հայաստանի աջակցության խմբի անդամներ Ջեքի Սփեյերն ու Դեյվիդ Վալադաուն նույնպես հաղթանակ են տարել: Հաջողակ են եղել նաեւ Ջիմ Կոստան եւ Նենսի Փելոսին: Սակայն սենատոր Մարք Քիրքը եւ կոնգրեսական Ռոբերտ Դոլդը պարտվել են Սենատում եւ Կոնգրեսում ընտրությունների ժամանակ:

Հասարակական

Հայկական Հարցի ներկա խնդիրները «2»

Դր. Էդիկ Բաղդասարյան
Լույս և Ապագա թերթերի
գլխավոր խմբագիր

Հայկական Հարցի լուծման մանիֆեստ՝ ծրագրային հայտարարություն

2015 թվականին լրանում է հայոց ցեղասպանության 100-ամյակը: Թե Հայաստանի հանրապետությունում, եւ թե Հայկական սփյուռքում պատրաստվում են ոգեկոչելու այդ դարերիցը:

Այդ 100 տարիների ընթացքում ի՞նչ է կատարել հայ ժողովուրդը, իր կորցրած մարդկային, տնտեսական, հասարակական, քաղաքական եւ մշակութային արժեքների գնահատման, հատուցման ու վերականգման ուղղությամբ: Այդպիսի գնահատական տալու համար անհրաժեշտ է հետադարձ հայացք նետել անցյալին, վերագնահատել տեղի ունեցած դրական ու բացասական փորձերը, դասեր վերցնել մանր ու խոշոր սխալներից, ապա վերլուծելով ներկա իրավիճակն ու առկա

մարտահրավերները, ծրագրել հետագա քայլերն ու պարտավորությունները եւ հարմարավետորեն բաժանել նրանց հանձնառուների միջեւ:

Անկախ նրանից, որ այդ ծրագրերի գործադրումը ինչ եւ ինչքան աղբյուր կամ աղբյուրներ կպահանջի, անկախ նրանից, որ դրանք ժամանակագրական ինչ փուլեր ու տեղադրություն եւ ֆինանսական միջոցներ կարիք կունենան, փաստ է, որ այդպիսի ծրագրեր որոնց գլխավորն է համրվում Հայ Համագրային Ռազմավարական Ծրագիրը (<<ՌԾ) անհրաժեշտ է հայ ժողովրդի ներկա եւ ապագա բոլոր սերունդների համար: Այն պիտի հասակակալան-քաղաքական, հասարակական-տնտեսական եւ հասարակական-մշակութային բոլոր միջոցառումների հիմքն ու թելադրող սկզբնաղբյուրը լինի, այնպես, որ ժամանակի ընթացքում տարբեր պայմաններում հնարավոր կդառնա այդ ծրագրի տարբեր մասնիկների իրագործումը: Մակայն ի՞նչ ակնկալիքներ կլինեն այդ ազգային ռազմավարական ծրագրի բացակայության դեպքում: Պարզ պատասխանը այն ինչ է, եթե ոչ Հայ ժողովրդի ներկա իրավիճակը մանավանդ Հայոց ցեղասպանության կապակցությամբ:

Արդեն շուրջ հարյուր տարիներ են եկել ու գնացել, սակայն հայ ժողովուրդը կատարել է համարյա ոչինչ, եւ հիմա դրա դարեդարձին մտադիր է եւս մի շարք միջոցառումներ իրականացնել, որոնք մեծ հավանականությամբ ոչինչով չեն տարբերվելու այդ հարյուրամյա անգործունեությունից:

Մինչ օրս, թե Առաջին Հանրապետության, թե Խորհրդային Հայաստանի եւ այժմ երրորդ Հանրապետության իշխանությունները, եւ սկյուռքում գործող հայկական ավանդական կուսակցություններն ու նորագույն կազմակերպությունները չեն վերցրել արդյունավետ քայլեր Հայկական Հարցի ամբողջական լուծման ուղղությամբ, եւ չունեն հստակ արդյունավետ ծրագրեր, մանավանդ, որ շարունակում են հետեւել անցյալի սխալ գործընթացները, ոմանք էլ շահագործելով Հայկական հարցը, միայն եւ միայն օգտագործում են այն իրենց գոյատևման նպատակով՝ իրենց գրպաններն են լցնում Հայ ժողովրդի ազգային զգացումներին հաշվին:

Հայկական Հարցի լուծման համար անհրաժեշտ է հետեւյալ դրույթները.

- 1- Ուժեղ Ազգային բանակ
- 2- Ուժեղ Ազգային Տնտեսություն (Արդյունաբերություն, Գյուղատնտեսություն)
- 3- Հայրենի հողի վրա Հայ ժողովրդի բնակչության թվի աճ
- 4- Գործունյա Գիտական ներուժ
- 5- Համագրային հասարակական-քաղաքական, հասարակական-մշակութային, հասարակական-հայրենասիրական-հոգեբանական մակարդակի բարձրացում
- 6- Միջազգային քաղաքական ու իրավաբանական գործունեության աշխուժացում

Նշված դրույթների քննարկման համար հարկավոր է քննարկել

- ա) Հայաստանի ու Արցախի Հանրապետությունների անելիքները:
- բ) Հայաստանից անջատված հայկական տարածքների վրա ապրող հայերի անելիքները:
- գ) Հայկական Սփյուռքի անելիքները:

ա) Հայաստանի եւ Արցախի Հանրապետություններ (<<, ԱՀ)

Հայաստանի եւ Արցախի Հանրապետությունները հանդիսանում են Հայկական հարցի լուծման կարեւարագույն

հենկետն ու առանցքը, ուստի նրանց ժողովուրդն ու պետությունը կրում են չափազանց մեծ պարտականություններ:

Ա- Ժողովուրդ

1- ՀՀ եւ ԱՀ տարածքում ապրող հայ ժողովուրդը պարտավոր է ապահովել Հայրենի Ազգային իշխանությունը: Ժողովուրդը պիտի փաստի, որ պատկանում է մի ազգի, որը ցանկանում է համաշխարհային պատմության մեջ ունենալ իր ուրույն եւ պատվավոր տեղը, ուստի այդ հանգրվանին հասնելու համար պիտի հույժ պայքար մղի թե ներքին կարգով եւ թե արտաքին ասպարեզում, նա պիտի ոտքի ելնի եւ պայքարի ներքին եւ արտաքին դավադրությունների, սպագրային ու հակահայկական տարրերի ու գործընթացների դեմ, եւ փաստի, որ միասնական ազգ է եւ օժտված է բարձր կամքով կերտելու համար հայրենի երկիր, տեղական ժողովրդավարական պետություն, ազգային տնտեսություն, ուժեղ ազգային բանակ, ազգային գիտություն եւ մշակույթ, գիտակից հասարակություն:

2- Այդպիսի նպատակներին հասնելու համար, ազգասեր հայր պարտավոր է մնալ հայրենի հողի վրա եւ պայքարել բոլոր խոչընդոտների դեմ: Եթե Հայրենի հայր իր լուսավոր ապագան տեսնում է օտար ափերում, այդ հայրը երբեք չի կարող ստեղծել ու պահպանել իր հայրենիքը եւ հարատևել համաշխարհային պատմության բեմահարթակում:

3- Մշակութային-հոգեբանական փոփոխություն, վնասագերծել հայրենի համայնքները անհարիր վարքերից ու ապրելակերպից:

4- Հայրենի ժողովուրդը բաց գրկով պիտի դիմավորի ներկա արտասահմանում ապրող իր ազգակիցներին, առանց շահադիտական մոլուցքի, միայն միասնական համագործակցություն մշակելու, միասնական բարեկամական ու բարիդրացիական կենցաղ վարելու նպատակով:

5- Համայնքային համագործակցության եւ հասարակական օժանդակության հիմնարկների (ինստիտուտներ) կազմակերպում Հայրենի իշխանության պարզ եւ թափանցիկ ծրագրային ու նյութական ապահովությամբ:

6- Հայրենիքի բնապահպանության ապահովման ուղղությամբ համաժողովրդական ծրագրեր իրականացնել հայրենի բոլոր տարածքներում:

7- Ժողովրդական կամավորական շարժման ենթակառուցվածքի ստեղծում եւ տարածում ՀՀ եւ ԱՀ ամբողջ տարածքում: Այդ ենթակառուցվածքները պիտի իրենց գործունեությունը ծավալեն ու տարածեն ՀՀ, Արցախի, Արեւմտյան Հայաստանի, Ախալքալաքի ու Սփյուռքի միջավայրերում:

8- Ավելյալ ծրագրեր:

Բ- Պետություն

Բ-1- Ներքին քաղաքականություն

- 1- Հայտարարել արտակարգ իրավիճակ:
- 2- Վերանայել սահմանադրությունը, որի հիմքը պիտի հանդիսանա ժողովրդավարական-սոցիալիստական վարչակարգը: Այս կետը ունի իր հիմնավորված պատճառները:
- 3- Նշված հիմնական փոփոխությունների իրագործման համար կարիք կլինի անցկացնել հանրաքվե՝ միջազգային վստահելի կազմակերպությունների հսկողությամբ: Հարկ է օգտագործել Եւրոպական լավագույն փորձերից:
- 4- Հիմնավորել «Պետությունը ժողովրդի համար - ժողովուրդը պետության համար» նշանաբանը, եւ իրականացնել այն բոլոր ասպարեզներում:
- 5- Փոխել Ազգային հիմնը, ընդունել Խորհրդային Հայաստանի հիմնը, հարմարմարեցնել ՀՀ նորագույն իրավակարգին, կրճատել 30 վարչկայանի սահմաններում, քանի որ այն չափազանց ավելի ոգևորիչ է քան ներկա անփառունակ հիմնը:
- 6- Ազգային Բանակը դարձնել երկրի ամենակարգավոր հիմնարկը:
- 7- Բացահայտել ու հիմնովին վնասագերծել մատնական օթյակներն ու ռոթարիական ակումբները, 300-հոգիանոց

կոմիտեին պատկանող բոլոր անձանց ու հիմնարկներին: Այդպիսի շրջանակների հետ առնչությունը համարել ազգային դավաճանություն:

8- Արգելել այսպես կոչված «Ազգային ավանդական Կուսակցությունների» գործունեությունը Հայրենիքում, մինչև այն պահը, երբ նրանք նույնանուն կազմակերպություններ ունեն արտերկրում: Այդ պայմանը գոհացնելուց հետո, դատի տալ նրանց՝ իրենց անցյալ հայրենակործան գործողությունների պատճառով, որոնցից կարելի է նշել Ալեքսանդրապոլի դաշնագրի, Պրոմթեթի դաշինքի ստորագրումն ու Ֆաշիստական գերմանիայի հետ համագործակցությունը, Ներգաղթի դեմ գործողությունները, մի քանի տասնյակ հայորդիների սիսթեմային Իրանում, ԱՄՆ-ում, Լիբանանում եւ այլուր, Արաբա-իսրայելյան պատերազմի տարիներին ԱՄՆ-ի կենտրոնական հետախուզական կազմակերպության լրտեսական ծառայություններ մատուցած կուսակցություններին, որոնցից ոմանք դեռեւս շարունակում են այդպիսի ծառայություններ:

9- Ազգային արդյունաբերության առաջնահերթությունը դարձնել Ազգային բանակի սպառազինման, զարգացման, նորագույն տեխնոլոգիաներով օժտելու հանգամանքն ու ծրագիրը:

10- Մշակել ազգային-տեղական արդյունաբերական Պրոյեկտիվ տնտեսություն (Projective Approach) որի առաջնահերթությունը պիտի լինի նորագույն գեների, գյուղատնտեսական, արդյունաբերական ռոբոտիկական մեքենաշինությունը:

11- Բարձրագույն ուսումնական հիմնարկները հարմարեցնել երկրի քաղաքական-տնտեսական, արդյունաբերական, գյուղատնտեսական նպատակներին:

12- Ազգային ակադեմիան դուրս բերել լճացումից ու ինքնանպատակ լինելուց, պարտավորեցնել նրա զանազան ինստիտուտներին զբաղվել երկրին հարկավոր կիռարական հետազոտություններով:

13- Չարգացնել համացանցային ու տեղեկատվական տեխնոլոգիաները:

14- Ստեղծել Համահայկական դրամատուն՝ բանկ, որի աշխատանքի հիմքն է լինելու համացանցը (ինտերնետ), որին հնարավորություն կունենան մասնակցել նաև աշխատափյուռ հայությունը, որի շնորհիվ համայն հայություն նյութական պոտենցիալը պիտի ծառայի հայրենիքի զարգացմանն ու բարգավաճմանը:

15- Ստեղծել համացանցային տեղեկատվական պետական կայքէջ (Ձայնասփյուռ, հեռուստատեսություն, տպագիր լրատու), որի միջոցով աշխարհասփյուռ հայությունը կձանձրանա երկրում եւ սփյուռքում կատարվող բոլոր իրադարձություններին: Եւ փոխադարձաբար Հայրենի ժողովուրդը կձանձրանա արտերկրյա հայությունը:

16- Ստեղծել Համահայկական Ժողովրդական Խորհրդրան, որի ֆիզիկական կենտրոնը գտնվելու է Հայոց Մայրաքաղաքում, նրա նիստերը լինելու են ամսական մեկ անգամ վիրտուալ նորագույն տեխնոլոգիաների օժանդակությամբ, իսկ ֆիզիկական ընդհանուր ժողովը տարեկան մեկ անգամ ՀՀ-ում, բոլոր ճամբորդական ու կեցության ծախսերը պիտի հոգան տվյալ համայնքներն ու անհատ պատգամավորները: Պատգամավորների ընտրությունը կատարել համացանցային տեխնոլոգիաների օժանդակությամբ: Խորհրդարանի հիմնական պարտականությունն է լինելու Խորհրդարանի սահմանադրության, համահայկական ծրագրերի գործադրման եղանակի մշակումն ու ֆինասավորման միջոցների քննարկումներն ու ապահովումը: Նրա գործադիր օղակներից է լինելու Համահայկական Բանկը:

17- Ստեղծել վարչապետին կից Ազգային Ռազմավարական Ծրագրերի Կազմակերպություն, որը պիտի մշակի երկրաժամկետ, միջինժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր Ազգային տնտեսության զարգացման համար:

18- Երկրի նախագահի ամսական ժողովրդական հանդիպումով, հանդես գալ երկրի ռազմական, անվտանգության ու արտաքին հարաբերությունների ու միջազգային իրադրությանը մասնակցած

իր գործունեության եւ Համահայկական ծրագրերի մասին ընդարձակ գեկուցմամբ:

19- Երկրի վարչապետի ամսական գեկուցմամբ ժողովրդին ներկայացնել կատարված բոլոր աշխատանքներն ու իրականացվող ծրագրերի վերջին իրադրությունը:

20- Ազգային ժողովը հարկ է մշակի հակակաշտային խիստ կարեւոր օրինագիծ եւ օրենք, որի գործադրումը պիտի հանձնվի երկրի բարձրագույն հետախուզական, դատական, ու ոստիկանական մարմիններին:

21- Խիստ ստուգել ՀՀ նախագահների, վարչապետների, նախարարների ու բարձրաստիճան պետական պաշտոնյաների ունեցվածքը՝ պաշտոնը ստանձնելուց առաջ եւ հետո մինչև նրանց պաշտոնավարության ավարտը:

22- Պատկան նախարարությունները փաստացի գեկույցներ պիտի ներկայացնեն իրենց կատարած աշխատանքների մասին, որը պիտի հասանելի լինի ժողովրդական բոլոր խավերին:

23- Մշակել համացանցային հենակետ, երկրի բոլոր բնագավառների կարիքների ու խնդրվող միջոցների տվյալների տեղավորման համար եւ առիթ ստեղծել Համահայկական մակարդակով համագործակցության պոտենցիալի մասնակցությունը այդ կարիքների վերացման ուղղությամբ:

24- Հայտարար Համահայկական Հիմնադրամը պիտի անցնի պետական ստուգման ու հաշվետվության խիստ քննարկմանը՝ համապատասխան կանոնակարգով: Նա պիտի իր գործունեության իսկական ոլորտում ներառի Հայկական զինված ուժերի սատարման երկարատեւ ծրագիրը, եւ ստեղծի բանկային հատուկ հաշիվ Համահայկական Բանկում:

25- Կատարել հարկային համակարգի հիմնական բարեփոխումներ: Երկրում աշխատող բոլոր մանր ու խոշոր ձեռնարկություններին հավակարգչային գրանցման պարտադիր օրենքի ենթարկել, օրինագանցներին ենթարկել խոշոր տուգանքների ու երկարատեւ ազատազրկման:

26- Օլիգարխիան համարել ազգային դավաճանություն եւ դատել համապատասխան օրենքներով: Տնտեսական չարաշահումներ կատարած անձանց ենթարկել խիստ պատժամիջոցների (զումարային եւ ազատազրկման):

27- Իրականացնել համատարած հայրենասիրական պրոպագանդա, ժողովրդի ազգային ու հայրենասիրական զգացումներն ու հավատքը բարձր մակարդակի վրա դնել ու զարգացնել:

28- Սփյուռքի նախարարությունը պիտի ներգրավի սփյուռքահայությանը իր աշխատանքներում, ծառայի որպես մի կամուրջ արտերկրում ապրող հայերի եւ հայրենի ժողովրդի ու պետության միջեւ առանց խմբակցային կողմնորոշումների: Օգնել սփյուռքահայությանը հայապահպանման ծրագրերով, մշակութային ձեռնարկների, գրականության առաքման, եւ այդպիսի այլ միջոցներով, կազմակերպել հարատեւ ներգաղթի ծրագիր:

29- Մշակութային նախարարությունը, հարկ է զարգացնել երկրի մշակութային հիմնարկները՝ կազմակերպել արտասահմանային կանոնավոր ամսական ձեռնարկներ (Սփյուռքի նախարարության հետ համատեղ), որի եկամուտի գլխավոր մասը պիտի ծառայի Ազգային բանակի ու գիտական հիմնարկների զարգացման ու ռազմավարական ծրագրերի իրականացման ուղղությամբ:

30- Սահմանափակել օտար անունների օգտագործումը տնտեսական, գիտական, ուսումնական եւ այլ հաստատությունների ցուցատախտակի վրա: Ժողովրդին եւ մանավանդ ձեռնարկատերերին քաջալերել ու առաջնորդել դեպի ազգայինը, ստեղծել ու արտադրել Ազգային տնտեսության զարգացման հաշվին, եւ ընտրել ոսկեդենիկ հայկական բառեր, բառակապացություններ ու գուտ հայկական անվանումներ իրենց արտադրության ու ձեռնարկի համար:

31- Համաժողովրդական պայքար ծավալել (համապատասխան օրենքներով) օտարամուտ բացասական ազդեցությունների դեմ, որոնք հակասում են գուտ հայկական մշակութային ու հայկական հասարակական-քաղաքական ենթակառուցյին: Եւ քաջալերել

հայկական վարք ու բարքը, կենցաղակերպը, հոգեւոր ու աշխարհիկ մշակույթը եւ այլն:

32- Մրցանակաբաշխման նոր ծրագիր մշակել ու գործադրել, որով պիտի գնահատվեն այն անհատներն ու հիմնարկները, որոնք գերազանց ծառայություն կը մատուցեն հայկական մշակութային, գիտական, արդյունաբերական, տնտեսական եւ մանավանդ գինվորական ասպարեզներում: Այդ իրադարձությունը վերաբերում է ինչպես Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում ապրող հայերին ապա օտարազգիներին: Հարկ է վերացնել թայֆայական, խմբակցային, կուսակցական մոտեցումները ազգային հարցերի բնագավառից:

33- Սփյուռքի նախարարության հովանավորությամբ եւ ՀՀ եւ Սփյուռքի հասարակական կազմակերպությունների ու բարերարների կողմից ֆինանսավորվող «Համահայկական հրատարակչական Մարմին»- օգնելու հայրենի եւ սփյուռքահայ գրողների, բանաստեղծների, արվեստագետների ու հետազոտողների գործերի հրատարակմանը (տպագիր, թվային, եւ այլն):

34- ՀՀ-ում ապրող ազգային փոքրամասնություններին հնարավորություն տալ իրենց արտերկրի հայրենակիցներին փոխադրել Հայաստան, այդ շարքում՝ Եզդիներին, Ասորիներին, Չազաներին եւ այլն:

35- Ծրագիր Բ:

36- Այլ ծրագրեր:

Բ-2- Արտաքին քաղաքականություն

1. Պարզաբանել Հայկական Հարցի վերաբերյալ օտար պետությունների քողագերծված քաղաքականությունը մանավանդ 17-րդ դարից հետո մինչ այժմ, որի արդյունքում կհանապետներ մեր ազգի ու պետության իրական բարեկամներն ու թշնամիները, եւ այդ երկու սահմանումի միջեւ ընկնող մյուսները:

2. Սահմանափակել դիվանագիտական եւ այլ հարաբերությունները թշնամի եւ ոչ-բարեկամ պետությունների հետ, եւ զարգացնել նյուրը բարեկամ երկրների հետ:

3. Ըստ հին եւ ժամանակակից պատմության փաստերի ու ընդհանուր ընթացքի, ԱՄՆ, Մեծն Բրիտանիան, Ֆրանսիան, Գերմանիան չեն հանդիսանում Հայոց բարեկամներ:

4. Իսկ ըստ պատմական փաստերի, Հայ ժողովրդի բարեկամներ կարող են համարվել Ռուսաստանը, Պարսկաստանը, Չինաստանը, Ճապոնիան, Իտալիան, Հունաստանը, Կանադան, Հոլանդիան, Դանիան, Շվեդիան, Հնդկաստանը, Կորիան, որոշ Արաբական եւ Լատինամերիկյան երկրներ:

5. Ստեղծել Միջազգային իրավունքով զբաղվող իրավաբանների ու դիվանագետների հանձնաժողով, ՀՀ ԱԳ նախարարությունում:

6. Իրավա-դիվանագիտական հանձնաժողովը պիտի պաշտոնապես դատի տա Թուրքիայի ու Գերմանիայի պետություններին, որպես Հայկական Ցեղասպանության պատասխանատուներին:

7. Իրավա-դիվանագիտական հանձնաժողովը պիտի պաշտոնապես դիմի միջազգային դատական ատյաններ, այդ թվում՝ Հաագայի դատարան եւ դատի տա Թուրքիայի պետությանը, Արեւմտյան Հայաստանի ու Կիլիկիայի հայերի նյութական ու մշակութային ժառանգության ոչնչացման կապակցությամբ, պահանջելով Հայ ժողովրդից խլված հողերն ու հոգեւոր ժառանգությունն ու ֆինանսական փոխհատուցումը, վկայակոչելով՝ -Մեւրի պայմանագիրը՝ 10 օգոստոսի, 1920 թ.,

-ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճիռը՝ 22 նոյեմբեր 1920 թ.,

-Կիլիկիայի Անկախության Հռչակագիրը՝ 4 օգոստոս 1920 թ.,

-ՄԱԿ-ի մարդու իրավունքի հռչակագիրը,

-հարակից այլ պայմանագրեր եւ իրավական փաստաթղթեր:

8. Իրավա-դիվանագիտական հանձնաժողովը պիտի պաշտոնապես դիմի ՄԱԿ-ի Մարդու իրավունքի հանձնաժողովին, վկայակոչելով Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին հռչակագիրը, պահանջելով Արեւմտյան Հայաստանի հայերի ազգային եւ կրոնական ինքնության եւ քաղաքացիական ազատ կամքի դրսևորումը:

9. Իրավա-դիվանագիտական հանձնաժողովը պիտի պաշտոնապես դիմի միջազգային դատական ատյաններ, այդ թվում՝ Հաագայի դատարան եւ դատի տա Ազրբեջանի պետությանը, հայերի դեմ ցեղասպանության գործադրելու մեղադրանքով, 1918-ից մինչեւ 1988, ապա նրա ռազմական գործողությունները հայ բնակչության դեմ:

10. Արցախի հարցի միջազգային լուծում գտնելու համար, Իրավա-դիվանագիտական հանձնախումբը հարկ է դիմի միջազգային դատական ատյաններ, այդ թվում՝ Հաագայի դատարան, չեղյալ հայտարարի Խորհրդային Միության կուսակցական շրջանակների կողմից պարտադրված որոշումը՝ Լեռնային Ղարաբաղը Ազրբեջանի Հանրապետության կազմի մեջ մտցնելու կապակցությամբ:

11. ՀՀ Արտգործնախարարությունը պիտի պաշտոնապես չեղյալ հայտարարի Ալեքսանդրապոլի եւ Կարսի դաշնագրերը, եւ դիմի միջազգային դատական ատյաններ ու ՄԱԿ-ի ընդհանուր ժողովին եւ Անվտանգության խորհրդին, պահանջելով Հայ ժողովրդից խլված իրավունքների վերականգնումը:

12. Ստեղծել Դիվանագիտական Քննիչ Հանձնաժողով, Հանրապետության Բարձրագույն Անվտանգության Խորհրդին կից, որը պիտի մանրամասնորեն քննի եւ հետեւի ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների եւ դեսպանների, նաեւ կառավարության բոլոր անդամների գործունեությանը: Սահմանել խիստ պատժամիջոցներ օրինազանցությունների դեմ:

13. ՀՀ ԱՆ-ում անցկացնել դիվանագիտական, քաղաքական, տնտեսական, հասարակական եւ մշակութային հարցերի գիտական եւ գործնական թարմացման սեմինարներ:

14. ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները հարկ է կազմեն տվյալ երկրի հնարավորությունների եւ ՀՀ-ի հետ համագործակցության ամսական թարմացվող գեկուցագրեր, որոնք պիտի մտցվեն ՀՀ-ում ստեղծվող դիվանագիտական էլեկտրոնային համակարգի մեջ, որպես աղբյուր օտար երկրների հետ համագործակցության եզրերի կազմակերպման եւ ծրագրավորման նպատակով:

15. ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները հարկ է կազմեն տվյալ երկրում հայկական համայնքների հնարավորությունների եւ կարիքների ամսական թարմացվող գեկուցագրեր, որոնք պիտի մտցվեն ՀՀ Սփյուռքի նախարարությունում ստեղծվող տեղեկատվական էլեկտրոնային համակարգի մեջ, որպես աղբյուր օտար երկրներում ապրող սփյուռքահայության հետ համագործակցության եզրերի կազմակերպման եւ ծրագրավորման նպատակով:

16. Մշակել հիմնական ռազմավարություն Արեւելյան Հարցին վերաբերող Արեւելյան գործընկերների հետ համագործակցության ուղղությամբ: Ի նկատի ունենալով պատմա-քաղաքական ու դիվանագիտական դիմադրական, թարմացնել այդ ռազմավարությունը՝ հանուն Հայ ժողովրդի գերագույն շահերի: Այս պահին հարկ է ռազմավարական գործույն պայմանագրեր ունենալ Ռուսաստանի, Իրանի, Չինաստանի, Հունաստանի, Կիպրոսի, Սիրիայի եւ Հնդկաստանի հետ:

17. ՀՀ դիվանագիտական հարաբերություններին մակարդակը հարմարացնել երրկու երկրների համագործակցության պոտենցիալի ու ապագայի հետ, օպտիմալ գործունեություն եւ ֆինանսավորում ծավալելու ուղղությամբ, նվազեցնելով ծախսերը ըստ հնարավորին:

18. Երբ ՀՀ-ում կստեղծվի Համահայկական Տեղեկատվական Ընդհանուր Բազա, ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները հարկ է համագործակցեն նրա թարմացմանը, ի մասնավորի միացնող օղակներ կազմել մի կողմից Սփյուռքահայության ու միջազգային հասարակական-մշակութային կազմակերպությունների եւ մյուս կողմից ՀՀ-ում օժանդակության ցանկացող անհատների, համայնքների ու կազմակերպությունների միջեւ:

19. ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններին առընթեր ստեղծել զբոսաշրջիկային գրասենյակ, որը պիտի պրոպագանդի ու իրանավորություններ տրամադրի արտերկրի մասնավոր

ընկերություններին, ՀՀ-ում եւ Արցախում տուրիստական շրջագայություններ կազմակերպել:

20. ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններին առընթեր ստեղծել Առեւտրա-տնտեսական զարգացման գրասենյակ, որը պիտի պրոպագանդի ու հնարավորություններ տրամադրի արտերկրի մասնավոր ընկերություններին, ՀՀ-ում եւ Արցախում տնտեսական ծրագրեր կազմակերպել:

21. ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները ուսումնասիրեն տվյալ երկրի հասարակական-տնտեսական ու մշակութային զարգացման ընթացքի հարմարավետ դասերը եւ փոխանցել այն Հայրենի միջավայրին, երկրի զանգացման ուղղությամբ, եւ հարկավորության պահին համագործակցել տվյալ երկրի հետ Հայաստանում զարգացնել այդպիսի ծրագրեր:

22. Այլ ծրագրեր:

բ) Հայաստանից անջատված հայկական տարածքների վրա սպորտ հայեր

1. Ստեղծել տեղական հասարակական-մշակութային եւ համայնքային կազմակերպություններ:

2. Միջոցներ ձեռք առնել պապենական ժառանգությունների վերականգնման համար, տեղական հայամետ կազմակերպությունների ու իշխանությունների համագործակցությամբ:

3. Օգտագործել համացանցային եւ ՀՀ-ից սփռվող ռադիո-հեռուստացուցային ծրագրերը, վերագտնելով իրենց ազգային ու մշակութային ինքնությունը:

4. Մասնակցել գրոսաշրջիկային ծրագրերի ու հանախակի այցելել թե Հայաստան եւ թե Սփյուռքի հայկական համայնքներ, ծանոթանալ իրենց հայրենակիցների հետ, մշտական կապեր հաստատել նրանց հետ:

5. Օգտագործելով ԱՄՆ-ի կոնգրեսի որոշումը, ըստ որի Թուրքական պետությունը պիտի իրենց տերերին վերադարձնի մշակութային ժառանգությունը (օրինակ եկեղեցիներ) եւ միջազգային մարդու իրավունքի զանազան կազմակերպությունների հնարավորությունները՝ տեր կանգնի իր պապերի ստեղծած արժեքներին:

6. Հարաբերություն ստեղծել Սփյուռքի հայկական համայնքների եւ մարդասիրական ու բարեգործական կազմակերպությունների հետ, եւ հայցել նրանց համագործակցությունը իրենց մշակութային ու հոգեւոր արժեքների վերականգնման ուղղությամբ:

7. Երիտասարդների մասնակցությունը Սփյուռքի նախարարության կողմից ծրագրվող ձեռնարկներին, որը առիթ կստեղծի նրանց՝ ծանոթանալու թե ՀՀ եւ Արցախի հետ եւ թե դրանց միջոցով շփման մեջ կմտնի Սփյուռքահայ մյուս համայնքների հետ:

8. Երիտասարդներին ուղարկել Հայաստանի համալսարաններ անվճար ուսումը շարունակելու համար:

9. Ակտիվորեն մասնակցել տեղական հասարակական-քաղաքական եւ հասարակական-մշակութային գործողություններին, օրինակ գյուղական, քաղաքային, նահանգային ընտրություններին:

10. Գիտակից ակտիվիստները հարկ է հետազոտեն իրենց շրջանները, մասնավանդ գտնեն իրենց հայրենակից հայրերին եւ օգնեն նրանց վերականգնելու իրենց ազգային ինքնությունը, սակայն խուսափեն հակապետական արկածախնդրական գործունեություններից:

11. Ուսյալ անհատների ու ակտիվիստների համագործակցությամբ հարկ է ստեղծել հայկական դպրոցներ, դասընթացներ զանազան վայրերում եւ կամավորական կարգով հայրենի լուսավորչական գործունեություն ծավալել հայաբնակ (ծածուկ հայեր) շրջաններում:

12. Տեղական հայ ակտիվիստները հարկ է ստեղծեն տեղական հայկական (հայատառ թե լատինատառ) մամուլ, համացանցային համայնքային միջոցներ, օրինակ Ֆեյսբուքյան էջեր եւ այլն:

13. Սերտ կապեր հաստատել Կ. Պոլսի հայության հետ, եւ իրականացնել միասնական մշակութային ու հասարակական ծրագրեր:

14. Բարիդրացիական հարաբերություններ ամրապնդել տեղական մյուս ժողովուրդների հետ: Ի նակտի ունենալ, որ Արեւմտյան Հայաստանի ու արեւմտահայության ճակատագիրը շղկապված է նաեւ տեղական Բուրդ ժողովրդի ապագայի հետ:

15. Արեւմտյան Հայաստանում սպորտ հայերի ազգային նորագույն զարթոնքի շնորհիվ է միայն հնարավոր կերտել նոր սպագա:

16. Այլ ծրագրեր:

գ) Հայկական Սփյուռք

1. Սփյուռքահայության ամենագլխավոր ազգային պարտքն է «հայապահպանումը»:

2. «Ազգ»-ը միայն իր հայրենիքով եւ իր հայրենի հողի վրա ապրելով է որ կարող է կերտել իր ազգային ապագան:

3. Ազգը առանց մայրենի լեզվի ու ազգային ժառանգության ու հայրենի հողի չի կարող գոյություն ունենալ:

4. Պահպանել հայոց դպրոցն ու եկեղեցին:

5. Պայքարել աղանդավորության դեմ:

6. Ս. Էջմիածինն է միայն հայոց հոգեւոր կենտրոնը, ուստի հարկավոր է համախմբվել նրա շուրջ, եւ դառնալ մեկ հոգեւոր բռունցք:

7. Միացնել բոլոր սփյուռքահայ եկեղեցական թեմերը Հայրենի Ս. Էջմիածին:

8. Հայկական դպրոցներում օգտագործել հայրենի նոր ուղղագրությունը, որը իր դյուրությունների շնորհիվ, կը օգնի մասնավանդ մատաղ սերունդին սովորել մայրենի լեզուն առանց ուղղագրական խոչընդոտների:

9. Համագործակցել ՀՀ Սփյուռքի նախարարության հետ, տարեկան կանոնավոր մշակութային եւ վերապատրաստման օրեր անցկացնել ՀՀ-ում եւ Արցախում:

10. Հայրերենը կազմակերպական-կուսակցական նոր կենտրոնների զարգացումը, եւ հատկացնել առկա ֆինասական միջոցները Հայրենիքում մշակութային, հասարակական ու տնտեսական ծրագրերի իրականացմանը:

11. Օգտագործելով Համահայկական Տեղեկատվական Ընդհանուր Բազայի տվյալները, հովանավերել Հայրենիքում կարիքներ ունեցող ընտանիքին կամ անհատին մասնավանդ մանուկներին, յուրաքանչյուր սփյուռքահայ ընտանիքի կողմից :

12. Կազմակերպել Հայրենիքի հետ գրուկաշրջության ծրագրեր, Հայրենիք տանել թե հայերի եւ թե օտարերկրացիների:

13. Կազմակերպել Հայրենիքի հետ տնտեսական ծրագրեր, Հայրենիք տանել թե հայերի եւ թե օտարերկրացիների ֆինասական կարողությունները:

14. Հրատարակել Հայ ժողովրդի մասին տեղեկատվական, պատմական, մշակութային ու տուրիստական գրքեր ու մամուլ հայերեն, անգլերեն եւ տեղական լեզուներով, որոնց շնորհիվ թե սփյուռքահայությունը եւ թե մյուս ժողովուրդները կծանոթանան Հայ ժողովրդի պատմության ու մշակույթի հետ:

15. Կազմակերպել Համահայկական Հեռակա դասընթացներ դպրոցական, մասնագիտական եւ համալսարանական տարբեր մակարդակներով, Հայրենի եւ միջազգային համարժեք գնահատականով:

16. Վերացնել հին կուսակցական մտեցումները, դասեր վերցնել անցյալի սխալներից, վերանայել կամ նորովին մշակել կուսակցական ու կազմակերպական ծրագրերը:

17. Վերջ տալ հայասպանությանը, թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեւոր ու գաղափարական առումով:

18. Համագործակցել հայրենադարձության հայրենի ծրագրերին:

19. Համագործակցել Հայրենի Իրավա-դիվանագիտական հանձնաժողովի հետ, միջազգային դատարաններում Թուրքիայի ու Գերմանիայի դեմ դատի ընթացքին:

20. Արեւելյան Հարցի տեր Արեւմտյան երկրների կողմից Հայոց Յեղասպանության ճանաչման համար չվատնել ժողովրդական ֆինասական ու պատմական առիթները, քանզի վերջիններս ելնելով իրենց իմպերիալիստական շահերից երբեք չեն ճանաչելու Հայոց ցեղասպանությունը, եւ անհավանական ճանաչման դեպքում, երբեք գործնական քայլեր չեն վերցնելու հայոց իրավունքների վերականգնման ու փոխհատուցման ուղղությամբ: Ուստի ավելի ազգօգուտ կլինի եթե այդ ֆինանսական հնարավորությունները հատկացվեն հայրենիքում իրականացվող ծրագրերին:
21. Հայերի ցեղասպանության դատապարտման եւ հատուցման ուղղությամբ իրականացվող աշխատանքները պիտի կատարվեն միջազգային դատական ատյաններում, այդ թվում՝ Հաագայի դատարանում:
22. Կիրառել իրավական ուղղություն, որը ներառում է Հայոց պատմամշակութային եւ քաղաքակրթական արժեքների պաշտպանությունը ՄԱԿ-ի եւ Եվրոպական Մարդու իրավունքների դատարանում եւ համապատասխան այլ ատյաններում:
23. Արեւմտյան Հայաստանի հայերի ազգային ինքնության եւ ինքնագիտակցության բարձրացման խելացի ու ոչ-արկածախնդրական ծրագրերի իրականացում:
24. Մշտական մշակութային ու հոգեւոր եւ ազգային շփումներ կազմակերպել Արեւմտյան Հայաստանի հայերի հետ:
25. Մշտական գրոսաշրջիկային այցելություններ կատրել Արեւմտյան հայաստան, ՀՀ եւ Արցախ:
26. Նոր եւ մատաղ սերնդին քաջալերել ամրացնել իրենց հայրենի գիտությունն ու միմյանց հետ խոսել միայն մայրենի՝ հայերեն լեզվով:
27. Քաջալերել համացանցում օգտագործել հայերեն լեզուն հայերեն տառերով:
28. Ծխական տուրքը դարձնել Ազգային կանոնավոր տուրք, Համահայկական Բանկի միջոցով:
29. Տեղական ու շրջանային մակարդակով կազմակերպել տեղատուն եւ նվիրատվական ձեռնարկներ, հայրենի պատասխանատու կազմակերպությունների հետ համագործակցությամբ եւ համադրությամբ, ի շահ Հայոց Չինված ուժերի հզորացման, տնտեսական ու արդյունաբերական զարգացման ծրագրերի:
30. Սփյուռքահայ գիտնականների հաճախակի այցելություններ Հայրենիք, շփումներ նրանց ու հայրենի գիտնականների միջեւ, համագումարների ու հանդիպումների ծրագրում եւ գործադրում թե ֆիզիկապես եւ թե հեռակա համացանցային միջոցների օգնությամբ:
31. Այլ ծրագրեր:

Շար. 2 և վերջ

Յուլիա Գյուլյան, «Հայ ժողովրդի մշակութային ու հոգեւոր արժեքների յուրացումն ու ոչնչացումը եւ Թուրքիայի նեոսամանական քաղաքականությունը՝ մարտահրավերներ եւ սպառնալիքներ»

Թուրքիայի նեոսամանական քաղաքականության ժամանակակից ակնհայտ դրսևորումներից մեկը հայ ժողովրդի հոգեւոր մշակութային արժեքների յուրացումն ու ոչնչացումն է: Քաղաքականություն, որ տեւական ժամանակ իրականացրին թուրքական կառավարությունները, լինի դա սուլթանական, երիտթուրքական, կամ քեմալական: Այն արտահայտվեց սարսափելի ձևերով, հատկապես Հայերի ցեղասպանության տարիներին՝ 1894-1923 թթ., իրականացված թուրքական կառավարությունների կողմից՝ Արեւմտյան Հայաստանում եւ Օսմանյան կայսրության մեջ: Եւ քանի որ մարդկայնության եւ քաղաքակրթության դեմ կատարված այդ սարսափելի հանցագործության դատապարտումն ու վնասի հատուցումը Միջազգային ընկերակցության կողմից ամբողջությամբ չկատարվեց, ապա ցեղասպանությունը

շարունակվեց, շարունակվում է մինչև այսօր ընդունելով գանազան այլ ձևեր, այդ թվում նաեւ որպես մշակութային ցեղասպանություն: Այս համատեքստում է, որ պետք է ուշադրություն դարձնել քաղաքակրթական այդ ժառանգության հետագա ճակատագրին, որն այսօր հաճախ անվանում են «բնօրրան», նկատի առնելով, որ դա առնչվում է նրանց, ումից սկիզբ է առնում մեր աշխարհի ոգեղենությունը, մարդասիրությունը եւ մշակույթը: Հայ ժողովրդին պատկանող հնագույն քաղաքակրթության, մշակութային ու հոգեւոր ժառանգության զգալի մասը, ցավոք սրտի, այսօր գտնվում է այն պետության ձեռքում, ով ինքն է իրականացրել չարագործությունը, ով աշխարհին մտածված կերպով ի ցույց է դրել իր բարբարոսական վերաբերմունքը այլ ժողովրդի մշակույթի, այդ արժեքները ստեղծողի նկատմամբ: Ստիպված ենք արձանագրել, որ տեւական ժամանակ է ինչ Թուրքիայի նեոսամանական քաղաքականությունը, «զարգացնելով» երիտթուրքերի ավանդույթները, հետեւողական եւ մեթոդաբար շարունակում է ոչնչացնել հայ ժողովրդի մշակութային եւ հոգեւոր ժառանգությունը: Ցեղասպանության տարիներին, 19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի սկիզբ, բնիկ հայ բնակչության հիմնական մասի ֆիզիկական ոչնչացումից հետո, սկիզբ է առնում հետեւողական մի գործընթաց՝ արմատախիլ անելու այն ամենը, ինչ կար եւ ընդունված էր համարել հայկական: Անցնող դարի 28 թ.-ից սկսած անվանափոխության է ենթարկվում այն ամենը, ինչ պատմական է ու ազգային Արեւմտյան Հայաստանի տարածքի վրա: Հայկական տեղանունների ավելի քան 90 %-ը օտարված է, Արեւմտյան Հայաստանի աշխարհագրական անվանումները փոփոխված: Հայ ժողովրդին պատկանող հարյուրավոր ճարտարապետական հուշարձաններ վերածված են մզկիթների: Ավերվում է այն ամենը, ինչ ունի հայկական ծագում եւ կամ առնչված է հայերին, հայկական մշակույթին ու պատմությանը: Հուշարձանները, եկեղեցիները, ճարտարապետության գույնագործոցները, որպես թիրախներ են գործածվում թուրքական բանակի զինավարժությունների ժամանակ, ինչը վայրենաբար է ժամանակակից ցանկացած պետության համար, եթե իհարկե խոսք չի գնում ահաբեկչական խմբավորումների վերաբերյալ, ինչպես ԻՊ-ին է: Այն սակավաթիվ եկեղեցիները, որոնք դեռեւս կանգուն են մնացել, գործածվում են որպես ախոռ, պահեստ, կամ բանտ: Ստեղծվում են նոր եւ կեղծվում այլազան պաշտոնական փաստաթղթեր, որոնք խրախուսում են կեղծ գիտական հրատարակությունների ծնունդը, որտեղ հայոց պատմությունը եւ մշակույթը կեղծվում է եւ կամ միտումնավոր անտեսվում: Ստեղծված է «սովյաների» մի ողջ համակարգ, այսպես կոչված՝ «օրինական վանդալիզմի», ոսկու անօրինական որոնումների եւ պեղումների: Թուրքիայի կառավարության հովանավորությամբ՝ «ոսկեխոյզներն» առանց բացառության ոչնչացնում են ամեն ինչ: Այն հուշարձանները, որոնք Թուրքիային չեն պատկանում, դրանք մարդկության սեփականությունն են: Նրանց կորուստը անփոխարինելի է: Հայկական հուշարձանների ոչնչացումն ու յուրացումը Հայերի ցեղասպանության շարունակությունն է: Ֆիզիկական ոչնչացմանը հետեւեց մշակութային ցեղասպանությունը: Բազմաթիվ օրինակներից մեքերերնք մի քանիսը: Նեմրոթ լեռան վրա հայ անտիկ աստվածների պանթեոն է: Այնտեղ են տեղադրված հայոց աստվածների՝ Արամազդի, Միհրի, Վահագնի, Անահիտի, Աստղիկի 8-9 մետրանոց արձանները: Նրանց շարքին Անտիոքոս առաջինի արձանը՝ տեղադրված հայ երվանդունիների տոհմի այդ արքայի հիշատակին՝ մ.թ.ա. 62 թ.-ին: Այսօր թուրքերը յուրացրել են այդ ամենը եւ ներկայացնում են որպես իրենց սեփականը: Հայկական լեռնաշխարհում Պորտասարը (Գեբեկլի Թեփե-թուրք.) տաճարական համալիր է, որ ներառում է նաեւ աստղադիտարան: Մեծ եւ հնագույն մեգալիթյան կառույցներից է, շուրջ 12 հազար տարեկան: Պորտասարը մեր ժամանակի ամենակարեւոր հայտնագործություններից է: Դա մարդու ձեռքով կառուցված

առաջին տաճարն է: Եւ նա նույնպէս թուրքական ձեռով անվանափոխված է:

Անի քաղաքը հայկական «ուկեղարի» հուշարձան է: Անիի հայկական թագավորության հնագույն մայրաքաղաքը: «1001» եկեղեցիների քաղաքից մնացել են ավերակներ եւ նույնիսկ դրանք վանդալներն ավերում են: Թուրքերն անվանափոխել են Անին Անր-ի եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջոցով փորձում են դա ներկայացնել որպէս Թուրքիայի մշակութային ժառանգություն:

Նրանք ձեռք են բարձացրել նաեւ բիրլիական արժեքների վրա, հայերի հիմնական խորհրդանիշներից մեկի, Արարատ լեռան, որ անվանափոխել են որպէս Ադրը:

Համաձայն 1914 թ. տվյալների հայկական եկեղեցիների ու եկեղեցական համալիրների ընդհանուր թիվն Արեւմտյան Հայաստանում եւ Օսմանյան կայսրության մեջ կազմել է 2549 (այդ թվում IV-V դդ. վաղ քրիստոնեական հուշարձանները): Դրանց մեծ մասը թալանվել, հրկիզվել եւ ավերվել է ցեղասպանության ժամանակ: ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1974 թ. տվյալների համաձայն 1923 թ.-ից հետո պահպանված 913 պատմամարտարապետական հուշարձաններից 464-ը հիմնաստակ ոչնչացվել են, 252-ը ավերակ վիճակում է, 197-ը հիմնական վերանորոգման կարիք ունի: Այսօր արդեն գրեթե ոչինչ չի մնացել վերականգնելու, Թուրքիան դրանք բոլորը ծրագրավորված կերպով ոչնչացրել է:

Որպէս նեոսամանականության քաղաքականության ժամանակակից դրսեւորում կարելի է դիտել Սսի Կաթողիկոսական համալիրը կաթողիկոսարանին վերադարձնելու մերժումը, ինչը նրանք յուրացրել են 20-րդ դարում ցեղասպանությունն իրականացնելու միջոցով:

Թուրքիայի ներկայի քաղաքականությունը հանգեցրել է նրան, որ արեւմտահայերենը հայտնվել է ոչնչացման վտանգի տակ գտնվող լեզուների շարքում, քանի որ Արեւմտյան Հայաստանից բռնագաղթվածները հնարավորություն չունեն պատմական հայրենիք վերադառնալու եւ մայրենին այնտեղ գործածելու ու զարգացնելու, որպէս իրենց բնական իրավունքի արտահայտություն:

Թուրքիայի վարած նեոսամանականության ու ձուլման քաղաքականության հատկանշանական օրինակ է վերաբերմունքը համընթացաբար նկատմամբ, որոնք հիմնականում ենթարկվեցին բռնի մահմեդականացման: Ծատերը կորցրին իրենց արմատներն ու ազգային ինքնությունը, չեն ընդունում իրենց հայկականությունը, իրենց անվանում են «հեմշիլներ»: Աղոթք կարդալիս արեւմտահայերենով (օրինակ՝ Հայր մերը) ոմանք էլ համոզված են, որ դա համընթացական աղոթք է՝ թուրքերեն լեզվով:

Իսկ ճարտարապետական գոհարները, միջնադարյան համընթացական կամարակապ կամուրջները՝ թուրքերը առանց ամոթի արձանագրում են, որպէս իրենց ձեռքբերում: Եւ մենք պետք է օգտագործենք բոլոր հնարավորությունները օգնելու մեր համընթացաբար եղբայրներին ու քույրերին վերադառնալու իրենց հայկական արմատներին:

Հայկական գորգերը թուրքերը ներկայացնում են իբրեւ իրենցը, նույնիսկ եթե բերում են Հայաստանից եւ կամ կրկնօրինակում են դրանք, անկախ հայկական խորհրդանիշներից, գույներից եւ այլ... պնդելով թե ներկայացվածը թուրք ժողովրդի ձեռքբերումն է:

Նրանք այնքան անսկզբունքային ու անշնորք են, որ մեր հայրենասիրական երգն են յուրացրել՝ «Չարթի յառ»-ն, աշխարհում միակ օրօրոցայինը, որտեղ մայրը որդուն քնեցնելու փոխարեն արթնացնում է՝ կոչելով պաշտպանել Հայրենիքը, երգ՝ որով մեր ֆիդայիներն ու մարտիկներն են կռվի ելել: Թուրքական ֆուտբոլային ակումբն այն յուրացրել է եւ գործածում է որպէս հիմն, բնականաբար փոխելով բառերը թուրքերենով:

Հնագույն հայկական խոհանոցը նույնպէս «կողոպտվել» է հարեւանների կողմից, ինչը դուրսին է ապացուցել, եթե անդրադառնանք ակունքներին՝ ուսումնասիրելով, թե ինչից եւ ինչպէս է պատրաստված կերակուրը:

Բերենք հացահատիկի օրինակը, թեւեւ կարող ենք եւ այլ օրինակների դիմել: Հացահատիկի 3-4 տեսակներ համարվում են բուն հայկական: Հայտնի է, որ հացահատիկի հայրենիքը

Հայկական լեռնաշխարհն է: Հայերն են, որ հնուց զբաղվել են հացահատիկի մշակմամբ: Բլոբր, փոխինձ, կորկոտ, ձավար, անառ... եւ այս ամենը այսպէս ձեւերով մշակվելով խմորի հետ օգտագործվում է հայկական խոհանոցում: Բլոբր այն կերակրատեսակները, որոնք թուրքերը եւ այլ հարեւաններ ՅՈՒՆԵՍԿՕ-ի «օժանդակությամբ» ճգնում են յուրացնել, իրականում բուն հայկական ստեղծագործությունն են, որովհետեւ ունեն պատրաստության մաքուր հայկական եղանակ՝ թոնրի մեջ, եւ ունեն հայկական անվանումներ: Այդ ամենը վերաբերում է նաեւ յավաշին ու մատնաքաշին:

Ինչպէս կանխագուշակում են շատերը, «քաշիկ» ազգային կերակուրից հետո (քաշել խոսքից), թուրքերը կցանկանան յուրացնել թոնիրը, որը Արեւին երկրպագելու ժամանակներից ի վեր կերի համար Արեւի խորհրդանիշն է երկրի վրա: Թոնիրն ունի մի քանի գործառույթ, բացի նրանից որ վառարան է կերակուր պատրաստելու, նաեւ տաքացնում է կացարանը, բուժում է հիվանդությունները եւ այլն:

Այն ամենը ինչ ներկայացվեց վերելում կատարվում է ցուցադրելու համար, որ թուրքերը բնակչության գլխավոր տարրն են Հայկական լեռնաշխարհում: Սակայն որքան էլ ջանան կեղծել իրենց պատմությունը, վճարել ամենատարբեր յոբբիստական կազմակերպություններին, միեւնոյնն է դա չի ստացվում անել, պատմությունը հիշում է քոչվորներին, որոնք բռնագաղթեցին այլոց հողերը, յուրացրին նրանց ունեցվածքը եւ մշակութային արժեքները:

Թուրքիայի Հանրապետությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ է: Ժամանակն է ՅՈՒՆԵՍԿՕ-ին եւ այլ միջազգային կազմակերպություններին պահպանելու պատմական արդարության սկզբունքները, իրավունքները, էթիկայի նորմերը եւ ոչ այնպէս, ինչպէս հիմա՝ գործածելով երկակի սկզբունքներ: Հուսով ենք, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ այլ միջազգային կազմակերպությունների բարեխիղճ մասնագետները կկասեցնեն շարունակվող վանդալիզմը եւ կսկսեն աշխատել հաճոյք ստանալով իրական պատմագրության ուսումնասիրությունից, այլ ոչ թե մտածածին, կամ նրանց ներկայացված որպէս իրական: Դա ոչ միայն Հայ ժողովրդի պատմությունն է, այլեւ համաշխարհային, որը մարդկության հոգեւոր մշակութային ժառանգությունը:

Յուլիա Գյուլյան՝ «Համընթաց» Համընթացաբար կանանց միջազգային միության մշակույթի հանձնաժողովի ղեկավար, նախագահության անդամ

(Հատուկ գեկույց Մերձավոր Արեւելքի հարցով «REGNUM» Ռուսաստանի դաշնային լրատվական գործակալություն կազմակերպած «Թուրքիայի վարած ներկայի նեոսամանական քաղաքականությունը՝ մարտահրավերներ ու սպառնալիքներ» անվանումով միջազգային կոնֆերանսում Ռուսաստանի, Հայաստանի, Սիրիայի, Իրանի, Թուրքիայի, Երաքի եւ Իսրայելի նախագահական քաղաքագետների եւ փորձագետների մասնակցությամբ: 17.11.2016 թ.)

Թարգմանությունը ռուսերենից՝ «Մոյան Տապան» Լրատվական գործակալության

Արցախին սատարելը գիտակցական քայլ է, որին պետք է դիմի յուրաքանչյուր անհատ.

Շահան Գանտահարյան
Հոկտեմբերի 20-24-ը Երևանում և Ստեփանակերտում կայացավ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանրապետությունների անկախության 25-ամյակին նվիրված «Հայոց պետականությունը՝ միասնության առանցք»

խորագրով Լրագրողների համահայկական 8-րդ համաժողովը, որին մասնակցեց շուրջ 140 լրագրող աշխարհի 31 երկրից:

Ամփոփելով համաժողովի աշխատանքները՝ մասնակիցները որոշեցին համահայկական լրատվամիջոցներով սկսել «Դու՛ ի՞նչ ես անում Ղարաբաղի համար» համահայկական շարժումը, որի շուրջ և «Հայերն այսօր»-ը գրուցել է Լիբանանի «Ազդակ» օրաթերթի գլխավոր խմբագիր, Լրագրողների համահայկական համաժողովները համակարգող խորհրդի նախագահ Շահան Գանտահարյանի հետ:

- Պարո՛ն Գանտահարյան, արդեն անցյալ է Լրագրողների համահայկական 8-րդ համաժողովը, որն անցկացվեց Երևանում և Ստեփանակերտում: Ամփոփելով համաժողովի աշխատանքները՝ ինչպե՛ս եք գնահատում Սփյուռքի նախարարության կողմից համաժողովների կազմակերպումն ու աջակցությունը: Որո՞նք են Ձեր կարծիքով այս տարիների կարևոր ձեռքբերումները:

- Նման համաժողովները ծառայում են փոխճանաչողությանը, այնուհետև ունենում գործնական դրսևորումներ՝ համագործակցության ուղիների ճշտման առումով: Այս համաժողովների շնորհիվ է, որ սկսեց գործուն աշխատել Հայկական աշխարհում գործող բոլոր լրատվամիջոցների ցանցային համակարգը:

Հետզհետե նկատում ենք հայրենի լրատվամիջոցներում սփյուռքյան կազմակերպված կյանքի ճիշտ, օբյեկտիվ լուսարանում: Փոխադարձաբար, հայրենիքն էլ առավել ներկա է սփյուռքյան ՉԼՄ-ներում: Այս համաժողովների շնորհիվ՝ սփյուռքյան կարևոր թերթեր ունեն իրենց սեփական թղթակիցները Հայաստանում:

2010 թվականին կայացած Լրագրողների համահայկական 5-րդ համաժողովը հատուկ քննարկել էր հակառակորդների սանձազերծած ապատեղեկատվական արշավներին՝ ճիշտ դիմակայելու ռազմավարական ու մարտավարական խնդիրները: Արիստոտելի պատերազմի ժամանակ մենք ակնառես եղանք, որ հայկական լրատվադաշտը լուծել էր իր դեմ դրված բազում մարտահրավերները և փայլուն կատարողականությամբ իրականացրեց ճգնաժամային տեղեկատվության գործողությունները: Մեր լրատվամիջոցներն իրենց աշխատելատեղով ցույց տվեցին, որ հատկապես նման պահերին պետք է լրատվությունն ու մեկնաբանությունը բացառապես հիմնել համապատասխան գերատեսչությունների թողարկած տեղեկատվությունների վրա:

Սա փաստ է: Եվ համոզված եմ, որ այս փաստի կայացման մեջ դերակատարություն ունեն նաև մեր համաժողովները:

Նման համախմբվածություն և նման ընդգրկուն օրակարգեր, նման ընդառաջում և մասնակցության պատկեր՝ միայն պետական տանիքի տակ կարելի է իրականացնել: Սփյուռքի խայտաբղետ դաշտը միայն նման առանցքի շուրջ կարելի է համախմբել և՛ իրրև գաղափարախոսություն, և՛ իրրև մեխանիզմ և ծառայություն

- Պարո՛ն Գանտահարյան, Լրագրողների համահայկական 8-րդ համաժողովի ընթացքում սկիզբ դրվեց «Դու ի՞նչ ես անում Ղարաբաղի համար» համահայկական շարժմանը: Ձեր կարծիքով ո՞րն էր նման շարժում նախաձեռնելու շարժառիթը և ի՞նչ է այն ենթադրում:

- Կարծում եմ՝ շատ կարևոր կարգախոս է Հայկական աշխարհում համակարգելու Արցախի միջազգային ճանաչման և Արցախի Հանրապետության հզորացման նպատակով տարվող աշխատանքները:

Համոզված եմ՝ Հայկական կազմակերպված Սփյուռքում չկա համայնք, որ այս նպատակների համար քարոզաքաղաքական առումով գործողություն չի իրականացնում: Այս կարգախոսը անպայման կիսանի, որ առավել ևս համակարգված, ծրագրված և նպատակուղղված աշխատանքներ կազմակերպվեն տարբեր ոլորտներում, հատկապես՝ մշակութային, կրթական, երիտասարդական, գրասաշրջության, բնակեցման:

Յուրաքանչյուր համայնք էթե իր երգչախմբի համերգը, պարախմբի ելույթը, մարզական խմբի մրցությունը մեկ անգամ կազմակերպի Արցախում՝ մենք կունենանք փառատոնային եղանակներ:

Եթե յուրաքանչյուր համայնք իր երկրի ամենանշանավոր լրագրողներին գործուղի Արցախ, արդյունքը կլինի այն, որ բազմաթիվ օտար լրատվամիջոցներում մենք կունենանք Արցախի խնդիրը ճիշտ լուսաբանող լրատվական-մեկնաբանական նյութ:

Եթե յուրաքանչյուր համայնք կազմակերպի գրասաշրջային այցելություններ դեպի Արցախ, ընդ որում՝ ոչ միայն տեղի հայերի, այլ նաև օտարազգիների, մենք կունենանք գրասաշրջության որոշակի ան:

Այս տարի 140 լրագրող աշխարհի 31 երկրից արդեն երկրորդ անգամ համախմբվեցին Ստեփանակերտում (2010 թվականին Լրագրողների համահայկական 5-րդ համաժողովը ևս անցկացվել է Ստեփանակերտում-Հ.Ա.): Տարբեր ոլորտների համաժողովներ ևս պետք է անցկացնել Ստեփանակերտում, Շուշիում կամ Արցախի այլ քաղաքներում:

- Լրատվամիջոցներն ինչպե՛ս կարող են նպաստել շարժման տարածմանը:

